

565.

891.99.092

C-30s



391.99-092

C-3D S.

ԱՐՄԵՆ ՏԵՐՏԻԿԵԱՆ



ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

ՍԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԱՐԱԿԻԹԵԱՆ ԵՐԳԻՂԸ

1002
8986

5656 24

Վաղարշապատ տպարան Մայր Աթոռոյ Ս. էջմիածնի

1913





ԼԵՒՈՆ ՇԱՆԹ.

ՍԵՐԻ ԵՀ ԴԱՄԱԼՔՈՒԹԵԱՆ ԵՐԳԻՉՀ.

I.

Լեռն Շանթին բախտը ժպտաց անակնկալ կերպով։ Մի քանի տարի առաջ ով կարող էր մտածել, որ նա ընթերցող հայ հասարակութեան վրայ պէտք է ազդէ մոգիչ կերպով, ինչպէս այսօր։ Տաճկահայ գեղագէտը վերջապէս կարողացաւ ստեղծել իւր գլուխ գործոցը — «Հին Աստուածները», որի մէջ փայլուն կերպով հասր ունեցաւ խտացնել և ցուցադրել այն բոլոր արժէքները, ինչ որ յատկանշական են նրա տաղանդի և գեղեցկի համար։

Որ և է գեղագէտի գլուխ գործոցն ըմբռնելու համար պէտք է վերլուծութեան ենթարկել նրա ստեղծագործութիւնը բովանդակապէս, ցոյց տալ կեանքի և իրականութեան այն խորշերը, որոնց վրայ սփոհել է տաղանդը իւր գեղեցկի լոյսերը։

Գեղագէտի հոչակը հանրական երևոյթ է և հասարականօրէն պայմանաւորւած որոշ տւեալներով։ Մեր կեանքը, ուսւահայ իրականութիւնը մի քանի տարի առաջ ամենայն հաւանականութեամբ այնպէս սրտալի արձագանք չէր տայ Շանթին, ինչպէս այսօր։ Եւ դա ունի իւր խոր պատճառները, որոնց պէտք է մերկացնել՝ մի կողմից հեղինակի ստեղծագործութիւնը, միւս կողմից նրա հոչակը հասկանալի և պարզ կացուցանելու համար։

Տաղանդը փոխագրեցութեան արդիւնք է։ Որքան մեծ է նա, այնքան շատ սրտեր է նւաճում և այնքան շատ մտքերի վրայ գերիշխում։ Սակայն նւաճւած սրտերն ու գերիշխւած



6605-70

Խաղաղության պատմություններ
Հ 101

մտքերն էլ իրենց հերթին սնունդ են տալիս գեղագէտին
և դառնում այն պատւանդանը, որի վրայ կառուցանում է
տաղանդը իւր գեղարւեստական շէնքը:

Մեր գեղարւեստական գրականութեան մէջ մի խոշոր
յեղաշընումն տեղի ունի: Նախկին գրական ուղղութիւնը,
որ մեծապէս հրապարակախօսական է՝ անցեալի գիրին է
անցնում: Կուի ապրումները, պայքարի աղմուկները, ամե-
նակարող հերոսութիւնն ու անմարմին հրեշտակութիւնը
քշում են ասպարիզից և աեզ է բացւում մի նոր հոսանքի
առաջ, որ գեղարւեստական է անսպարտօրէն, բայց իւր
վախճանական իդէաներով միակողմանի է գերազանցապէս:

Վաղեմի գրական շկօլան վտարել էր կինն ու սէրը
կամ գրել էր նրանց երկրորդ պլանի վրայ, առաջնագոյն
մտահոգութեան առարկայ չէր դարձնում. նրան հանրա-
կան հարցեր էին յուղում, մարդու յարաբերութիւնը դէպի
մարդը, հաստրակականօրէն փրկւելու ձամբան էր նրա պատ-
կերացման նիւթը:

Նոր գրական շկօլան կինն ու սէրը գրեց առաջին շար-
քում, մարդն ինքն իւր մէջ, նրա ներքին ապրումներն ու
խոկումները, յոյզերն ու մտքերը դարձրեց առաջնագոյն
պատկերացման օբիէկտ:

Վաղեմի գրական շկօլան ստեղծել է ամենակարող հե-
րոսներ, որոնք ամեն ինչ զոհաբերում են յանուն գաղա-
փարի: Եւ տուն, և ստացուածք, և փառք ու պատիւնրանք
զնում են հանրութեան սեղանի վրայ իբրև նւիրաբերու-
թիւն: Գաղափարն ամենակարող մի ոյժ է նրանց համար
և զիտէ ենթարկել իրեն, քաշել ու տանել իւր ետեկց
շանմարմին ճպուուներին»:

Նոր գրական շկօլան մխտում է գաղափարի առաջմղիչ
ոյժը և մարդ անհատի հերոսական ամենակարողութիւնը:
Գաղափարը պիտի ծառայի անհատին և կարող է փոփոխւել
ըստ վերջնիս տրամադրութեան և շահերի: Զոհի սկզբունքը
պէտք է ենթարկվի շահի սկզբունքին, հանուրի շահը—ան-
հատականին: Ամենքն ուղում են ապրել և իրենց կեանքը
գեղեցկացնել. գաղափարի կոտապաշտութիւն հարկաւոր չէ,

և ի գէպս հարկին գաղափարից փախչելը դատապարտելի
չէ: Հայ և հաճոյք—ահա այն ասպարէզը, ուր ստեղծա-
գործողը ներկայով է ապրում և ապագայի մասին սրտի
ձմլումներ չունի:

Շանթը նոր գրական շկօլայի ականաւոր ներկայա-
ցուցիչներից մէկն է: Նա առաւելապէս պատկերացման
նիւթ դարձրեց այն թեմաները, որոնք նորութիւն էին մեզ
համար և ինքն շկօլայի կողմից անմշակ էին մնացած: Սիրոյ |
մէջ նա շեշտեց մարմինը, հանրական գործի մէջ—վայելքը:
Եւ այդ բոլորը նա արաւ մի սքանչելի, ներդաշնակ, գու-
նազեղ և հիւթալից լեզով: Նա տւեց դասական նկարա-
գիրներ, ուր բնութիւնը, որպէս մարմնականի և վայելչա-
կանի խորհրդանշան, կենդանի շնչում է: Նա վէպի մէջ յարդիկ մատուցը ուժեղ լիրիզմ, որ բացակայում էր վաղեմի դպրո-
ցում: Լիրիզմի հետ քով քովի նա երգեց կեանքի երա-
զայնութիւնը և իրեն ցոյց տւեց առաւելապէս իրեն բա-
նաստեղ, քան տիպականօրէն պատկերացնող արւեստի
ներկայացուցիչ:

Շանթը գեղագէտ է. նա ստեղծել է իւր համար մի
ուրոյն աշխարհ, որի մէջ ինքն իրեն այնպէս է զգում,
ինչպէս ծուկը ջրի մէջ: «Մարդ ինքն իր մէջ, ինքն իր
ներքին, իր սիրած, իր շինած, իր ուզած աշխարհքին մէջն
է, որ կրնայ միայն գոն ըլլալ: Թէ չէ դուրսի աշխարհքը
և ոչ մէկ բան իր տեղը զրած չէ. ամեն բան հակասական
ու անմիտ»—այս է գեղագէտ-Շանթի դաւանանքը, որ նա
արտայայտում է «Ճամբուն վրայ» գրամայի հերոսներից
մէկի բերանով. մի հերոս, որ նոյնպէս գեղագէտ է (տես
«Գարուն» ալմանախ, գիրք Ա. եր. 82):

Գեղարւեստական տաղանդի և գեղեցկի էութիւնն է
արտայայտած այս հատւածում: Ամբողջ աշխարհքից գե-
ղագէտն ընտրում է մի խորշ. որ հարազատ և սիրելի է
իրեն: Այդ խորշն ընդգրկում է նա, կարգաւորում ու յօ-
րինում է այդ վայրի երևոյթները, բայց այնպէս, որ նրա
կարգաւորած ու յօրինած աշխարհը վարակում է մեզ, լայ-
նացնում է մեր միտքը և խորացնում մեր զգացմունքը:

Գրսի աշխարհը, որպէս առօրէական հոգսերի մի վայր, իսկապէս «հակասական է ու անմիտ». այստեղ իշխում է անցողականն ու անհատականը: Այն ինչ գեղարւեստի աշխարհում ամեն ինչ ներդաշնակ է և նպատակաւոր, այստեղ տիրում է մշտնջենականն ու ընդհանրականը: Դրսի աշխարհքում ասես թէ մենք ապրում ենք հարկադրապէս, ոչինչ մեր կամքով, մեր ցանկութեամբ չէ լինում այդտեղ, ծնւում ենք պիտի ապրենք, ոչ մեր ծնունդը, ոչ մեր դիրքն ու կացութիւնը ինքներս չենք տնօրինում, այդ բոլորը տեղի է ունենում մեր ցանկութիւնից անկախ, յաճախ մեր ցանկութեանը տրամադօրէն հակառակ ուղղութեամբ: Գեղարւեստի աշխարհը մեր ուզածն է, ուստի և մենք դոհ ենք նրանից: Նա համակրելի մի աշխարհ է, ուր ապրում ու շնչում են մեր սրտին սիրելի և մեր մտքին հաճելի արարածներն ու ընավայրերը: Դա մեր յօրինած, մեր շնած խորշն է, ծնունդ է մեր սեղծագործական շանքերի և ամեն ինչ նրա մէջ իւր սկզբով, ընթացքով և վախճանով պայմանաւորւած է մեր ուզածի ու մեր ցանկութեան համաձայն: Գեղարւեստի աշխարհում մահը գոյութիւն չունի, որովհետև նրա արժէքները մշտնջենական են և ընդհանրական: Գեղարւեստի վայրկեանն աւելի տեական է և մնայուն, քան առօրեայ կեանքի տամնամեակը, որովհետև վերջինս վախճան ունի և կործանում, իսկ առաջինն անվերջ է և անկործան:

Իւրաքանչիւր գեղագէտ ունի իւր սիրած, իւր ուզած աշխարհքը, որից ինքը դոհ է: Լայնատարած կեանքից նա ընտրում է մի համակրելի հատւած և ընդգրկում, որովհետև նա տաղանդ է: Բայց նա միաժամանակ մեզ վարակում է իւր ընտրած կեանքով, մեզ մասնակից է գարձնում իւր սրտի ինդութեանը, որովհետև կեանքի այն հատւածը, որ նա պատկերացնում է, ներդաշնակ ու նպատակաւոր է հանդէս բերում. իսկ ինչ որ ներդաշնակ է ու նպատակաւոր, նա գեղեցիկ է. վերջինս իւր հերթին գոհացուցիչ է, որովհետև սիրելի է և ցանկալի, որպէս նպատակ, որին ձգտում ենք տարելայնօրէն և որպէս հարմօնիա,

որ կարգ է հաստատում դրսի աշխարհքում, ուր «ոչ մէկ բան իր տեղը դրած չէ» . . .

Ո՞րն է Լեռն Շանթի գեղեցիկը:

7

Շանթի «Դուրսեցիները» վէպի հերոսներից մէկը միւսին առարկելիս ի միջի այլոց ասում է, որ «մարմինը խելապատակէն աւելի խելացի է» (Երես 77): Մարդու մարմինը բնութեան մի մասնիկն է և բնութեան բոլոր անց ու գարձը մանրանկարչօրէն անդրադառնում է նրա մէջ: Գիտակցական բոլոր անդումներն ու բանաձեռը գէրօյի են հաւասարում, երբ մարմինը նրանց դէմ զնում է իւր արգելականը: Յոյզերի աշխարհը գերիշում է մտքերի դէմ, կեանքը աւելի հզօր է, քան իդէան, ներկան աւելի կենսալից է, քան ապագան:

Շանթի բնութեան և տեղերի նկարագիրների մէջ ամենից գեղեցիկն ու բանաստեղծականը նրանք են, որոնք մարդկային մարմնի զանազան մասերի ու վիճակների պատկերներն են ստանում: «Սենեակը նստած էր սեպ ու ամենի ապառաժի ցրունին ու շիտակ ձորի դատարկութեան վրայ կնայէր» («Դարձ», եր. 9): «Ժայռի լերկ գանգ մը հողի ներքին շերտերէն հետաքրքրութեամբ դուրս էր երկընցուցեր իր վիզը մութին մէջ . . . կարծես իր խաւարի վարժւած տեսողութեամբը դիտելու համար վարն ու շուրջը . . .» (նոյն տեղ, եր. 104): «Պատկերացաւ աչքերուն դէմ զով ու մամուս խոռոչը՝ ուս-ուսի տւած ամենի ժայռերու հովանիթ տակ. ուր ծովը, մաքրամոլ կատւի մը պէս, իր հսկայի լեզուվը անդադար կը լիզեր գետինը փուած նուրբ ու փափուկ աւագէ մորթիին եղերքը» («Դերասանուհին» եր. 18):

Մի քանի առղ նկարագիր, բայց որքան շատ մարմնեցն արտայայտութիւններ: Երթունք, վիզ, ուս, լեզու, մորթի . . . Շատ բնորոշ է այս բոլորը կեռն Շանթի գեղարւեստական ձիրքի առանձնայատկութիւնները հասկանալու համար:

Թւում է թէ աւելի անմարմին բան չկայ, քան երաշ ժըշտութիւնը: Բայց Շանթի մօտ երաժշատական նւազն ևս մարմնեղէն պատկերներ է յարուցանում: «Ես յուզւած կերպէի, թէ լսածս եղանակ մը չէր, այլ չարաձմի աղջկան մը եթերային մարմինը, որ աչքերուս դէմ արագ կը դառնար արեւեան պարի մը բոլոր քմահաճոյքներովը . . .» («Երազ օրեր», եր. 50):

«Մարմինը խելապատակէն աւելի խելացի է» սկզբունքը էն զլիից լևոն Շանթի նկարչական ձիրքի զլխաւոր առանձնայատկութիւնն է եղել: Իւր անդրանիկ երկի մէջ («Լեռան աղջիկը») նա դարձեալ մարմին է երգում, մարմնեղէն պատկերներ է ստեղծագործում:

Անոր արեստ այտերը սիրուն
Հազիւ էր պագեր տասընհինդ դարուն.
Եւ ինչ թարմ մարմին, և ինչ հրապոյր,
Ինչպէս ներակազմ, ինչպէս կենսաբոյր . . .

Հէնց որ որ ևէ կին կանգնում է լևոն Շանթի հանդէպ, սա սկսում է մի մանրակրկիտ անդամազննութիւն: Կնոջ խելապատակի հետ շատ քիչ անդամ է ծանօթանում Շանթի ընթերցողը, բայց նրա մարմնի բոլոր մասերի և այդ մասերի բոլոր ինտիմ առանձնայատկութիւնների հետ մեկին ծանօթութիւն և տեղեկութիւններ է ձեռք բերում: Եւ Շանթի այդ առանձնայատկութիւնը ցուցնում է ինքն իրեն հէնց նրա անդրանիկ երկի օրերից ի վեր.

Կ'դիտէի ես գորովով անանց
Իր մութ աչքերուն խաւարն անթափանց,
Իր խիտ յօնքերուն կամարը կրկին,
Որ մացառներ են կարծես ձորափէն
Ու ձորի վրայ ըստւեր կը թափէն.
Եւ թուխ այտերը, որ կը բռնկին,
Եւ վարդ շրթունքին զոյդ թերթերը թաց,
Ուր չար համբոյր մը կար միշտ պահւըած:
« . . . Հոգեկան օրօրման մէջէն անյագ աչքերով կը զննէր մաս-մաս իր դէմը փոււած ընկերունին, անոր ողորկ,

նուրբ ու ճերմակ դաստակը, որ նաւակի սուր եղերքին վրայ թեթև մը ծալք էր տւեր. անոր քոքէթ մը սեղմւած քորսէէն դուրս ցայտող բիւսար, որ երգին հետ կելսէջէր: անոր շրջազգեստին տակէն հետաքրքիր դուրս նայող իշրառու վրայ ինկած վոքքիկ անհանգիստ ոտքերը, ու անոր շագանակի մազերուն կարճ գանգուրները, որոնք ամեն կապանքի անհնազանդ՝ յարդէ լայնեզր գլխարկին տակէն ամեն ուղղութեամբ անոր քունքերուն ու ճակախն վրայ կը գալարէին» («Դերասանունի», եր. 57—58):

Լևոն Շանթի մարմնեղէն պատկերների հետ անխուսափելիօրէն կցորդւած են կըքալից տպաւորութիւններ: Աղջկայ գանգուրներից այտի և շրթունքների վրայ ընկած փունջը «անսառակ է», դէմքի ճերմակութիւնը նուրբ ու թափանցիկ «հարեւմական է» («Դերասանունի», եր. 19 և 41): Ամենատարբական բաները մեր գեղազէտի մօտ ստանում են սեռական բացատրութիւն: Պատանին բնական ցանկութիւն ունի իւր հասակակից ընկերունու հանդէպ ինքնինքը բարձրացնելու. «Երգեօք սեռական հպարտութիւնն է այս» հարցնում է նա («Երազ օրեր», եր. 23): Շանթի մօտ խելապատակն իւր երազների թափը ստանում է մարմնական թովչանքների հարկադրութեամբ. «Զէի կրնար գտներ մէկը, չէի հանդիպէր մէկուն, որու սրտին մէջ թափէի սիրտս ձնշող յուղումներուս յորդումը, որու նայուածին մէջ կարգայի անրջազս ապագայիս ու յոյսերուս իրականացման պատգամը, որու ցրունենուն նամբոյը կեանքիս համ տար, էութեանս բոյր, որ իդէական մտապատկերներուս գեղեցիկ ներկայացւցիչը լինէր, որ... է» (նոյն տեղ, եր. 25):

Եյս բոլորից յետոյ բնական է, որ Շանթի հերոսները կամ հէնց ինքը Շանթը ստեղծեն իրենց՝ սեռի փիլիսոփայութիւնը: Եւ խկապէս այդպէս էլ է. «Այն աստւածը, որ մարդկութիւնը միշտ պաշտեր է ու պաշտելու է. է ստեղծող արտադրող ոյժը . . . չէ որ սիրու հաճոյքն ալ ինքնին ստեղծելու հաճոյքն է. դիտակից թէ բնագդական, նոյն է ատիկա. սերնւնդը, մարդու ստեղծագործութեան ամենէն

վեհը. իր նմանին ստեղծագործութիւնը . . . » («Վերժին», եր. 108 և 109): Այս ինքնօրինակ աստւածաբանութիւնից բղխում է Շանթի հերոսների բարձր, բարձր կարծիքը սեռի և սիրոյ մասին: «Մէրը դեռ ամօթի կարգն է մեր հասարակութեան շրջաններուն մէջ. սէրը, որ կեանքի բարձրագոյն հպարտութիւնն է» («Դուրսկցիներ», եր. 9):

Հետաքրքրական է այժմ տեսնել թէ Շանթի ստեղծագործութեան մէջ ցայտուն կերպով հանդէս բերւած մարմնապաշտութիւնն ու սեռապաշտութիւնն ի՞նչ տեսակ սիրոյ աղբիւր են դառնում. արդեօք մարմնապաշտութեան և սեռապաշտութեան վրայ յենւած սէրը «կեանքի բարձրագոյն հպարտութիւնն է» թէ մի ուրիշ բան: Տեսնենք:

* *

(Շանթի բոլոր երկերի մէջ ցրւած է առատօրէն սիրելու մի անյագուրդ կարօտ) Նրա հերոսներն այս կամ այն չափով սիրում են, վայելում են սիրոյ թովչանքն ու վայելքները, բայց ինչ որ անկշտում են մնում և յաւերժօրէն աւաղում են սիրոյ շուրջը: Արդեօք որ և կապ կայ այդ անկշտութեան և վերոյիշեալ սեռապաշտութեան հետ: Մեզ թւում է, որ հոգեբանական շատ ամուր կապ և առնչութիւն գոյութիւն ունի այդ երկու երևոյթների միջև: Եւ մեր նպատակը պիտի լինի այս հատւածում շեշտել յիշածա առնչականութիւնը:

Սիրելու կարօտը, սիրոյ կիզիչ մորմոքը Շանթի հէնց անդրանիկ երկի մէջ ցայտուն կերպով հանդէս է բերւած: «Լեռան աղջիկը» քերթւածքի մէջ տեսսէք ինչ է ասում,

...Եւ երբ պատահէր, որ թոշնակն անմեղ
Թափէր ծառերէն սիրայորդ գեղգեղ,
Ըսկերուհին շուրջը յածելով
Ոստոստէր, երգէր իր սէրն ու գորով,
Ես կրծքիս խորը՝ նախանձէն ուսուծ
Կ'զգայի բուռն ու յուզիչ իղձեր.
Հովը ականջիս լոկ սէր կը հծծէր.

Եւ ես լալու չափ յուղւած, զրդուած
Կուզէի սիրւիմ, կուզէի սիրեմ
Ու թոշնակին պէս, ոստոստեմ երգեմ:

Այս պատկերը մարդարէական նշանակութիւն ունեցաւ Շանթի համակ ստեղծագործութեան համար: Մարմինը խելապատակէն աւելի խելացի է սկզբունքը եթէ ճիշտ է, ապա ուրեմն տիեզերքի վրայ գտնւած բոլոր արարածներն ըստ մարմնի ոչ մի տարրերութիւն չունին. ոչ թէ, ի հարկէ, կազմութեան կողմից, որ կարող է բարդ կամ պարզ լինել, այլ հակումների և արտադրութեան կողմից, որն իւր մէջ աստւածայնութեան պէս մի բան ունի ըստ Շանթի հերոսների տրամաբանութեան: Սակայն այս տրամաբանութեան ոյժն ու նշանակութիւնն էլ զէրոյի է հաւասարւում, երբ խելապատակը չէզոքացնում ենք և գոչում. կեցցէ մարմինն և իւր ֆիզիոլոգիան: Բանական մարդու մարմնի պահանջները և ծառերի վրայ ճռւղող թոշնակի սիրայորդ գեղգեղը կանգնում են մի տախտակի վրայ հաւասարութեան բոլոր իրաւունքներով: Թոշունն ոստոստում է մի թփից միւսը, նրա սէրը վայրկենածին է. բայց չէ որ բանական մարդու սէրն էլ վայրկենածին է ըստ Շանթի: Ի՞նչ է սէրը.

*Այս միջին Յօդի կատակ մը վարդի վառ կրծքին,
Որ շուա կը ցնդի արևածագին:*

Հենց այդ սիրով էլ սիրում են Շանթի հերոսները (բայց ոչ հերոսուհիները. այդ մասին յետոյ խօսք կ'լինի): Շանթի լիրիքական գործերի մէջ էլ շեշտւած է սիրոյ վայրկենականութիւնը: Ահա ձեզ «Կամուրջ» ոստանաւորը.

Թեթև, սիրուն կամուրջը մերկ
Հոծ տարփանքով պինդ կը փաթթէ
Խենթ գետակի մարմինը մեղկ
Յաղթ թևերովն իր երկաթէ:
Եւ գետակը ալ մոլեգնուա
Կը գալարի ինքն իր վրայ.

Փրփուր կուրքքը կուռի կրքոտ
Ու յուզումէն կը զոռգոռայ:

Իսկ ես թախծով կը նայիմ վար
Սէր ու կրքի այդ քերթւածին,
Որ կը հեղնէ հոտ դարէ վար
Մեր խեղճ սէրը վայրկենածին:

Իւր երգած սէրը Շանթը չէր կարող աւելի լաւ բնորոշել, քան արել է այս վերջին տողում. «մեր խեղճ սէրը վայրկենածին»: Բայց չէ որ թոշնի ոստոստումը թփից թուփ Շանթի հերոսների սիրոյ իդէալն է. ինչո՞ւ այլ ևս այդ տիրական ձգտումի հետևանքից խուսափել: Սիրոյ քաղցրութիւնը փափոխականութեան մէջ է: Այն սէրն է լաւ, ուրեմն և ցանկալի, որ պահանջկոտ չէ և ոչ մի փոխագարձ պարտաւորութեանսկզբունք չի ճանաչում: Աղջկայ սէրը պէտք է բնութենական լինի, ուրեմն և անպահանջկոտ ու փափոխական: Տամնենինդ տարեկան աղջիկը որտեղից է սովորել սիրելու արւեստը.

Դիւթելու իդը ան ուր էր ուսեր.
Եւ ինչո՞ւ գերել, գրաւել կուզէր.
Բայց ուրիէ ուսան աստղերը խայտալ,
Մեզի աչք ընել, պչրի ու խնդալ.
Ուրիէ սովորեցաւ գետակը գւարթ
Փրփուրէ քօղ մը ձգել իր վրայ,
Ան ինչո՞ւ կեռայ, ինչո՞ւ կդուայ,
Ինչո՞ւ կը քծնի ափերուն հպարտ . . .

Չափածոյ զրւածքների մէջ շեշտւած սիրոյ վայկենականութիւնը կրկնում է անփոփոխ կերպով և արձակ երկերի մէջ: Սկսենք «Երազ օրերից»: Գիշերօթիկը ինքն իրեն բռնում է, երբ իւր հոգեկան գիծն է պատկերացնում: Ի՞նչ գիծ է դա: —Պատահում է նա մի աղջկայ: Սկզբում խորհրդաւորութեան մի քօղ կայ ձգւած Եւայի այդ գտերը վրայ: Քօղը ձգում է դէպ ինքը: Տղայի մէջ ինչ որ յոյզեր են սկսում անզիտակից և թովիչ: Մօտենում է աղջկան, սկսում է տնտղել խորհրդի քօղը: «Սակայն կանցնի քանի

մի օր . . . խորհրդաւոր քօղը, եթէ բոլորովին չի բացւի, գէթ միւսներուն նման նոյն հասարակ աղջիկն է. կ'սիրասթափիմ անմիջապէս, առանց աղէկ հասկնալու, թէ ինչո՞ւ, նոյն իսկ այդ «հասարակ» բառը շատ որոշ չեմ ըմբռներ. միայն կըզգամ, որ այս ալ չի կըցաւ սիրտս նւաճել» (եր. 8):

Դարձ Եղանակ Օրենսդրութիւն
Վայրկենածին սիրոյ յատկանիշն է կրքի տիրականութիւնը: Եւ ի պատիւ Շանթի պէտք է նկատենք, որ նրա մօտ կան կրքի մօմենտների հոյակապ նկարագրութիւններ: Շանթը լուսանկարչական ճշմարտութեամբ է գուրս բերում կրքի ֆիզիոգիան: Մէկը կանգնած է ձեր առաջ բոլորովին արձանացած, անշարժ դրութեան մէջ, նա ոչ մի դիմագրութիւն ցոյց տալ չի կարող: Նրա գլուխը ետ է ընկած, թարթիչների ձեզը փոքրացած, նա խածել է իւր վարի շրթունքը, դժգունած է: Այս դրութիւնից մինչև կրքի խելագարութիւնը մի քայլ է: Կինը կրքի մօմենտին կարող է տարփանք զգալ դէպի իւր սեռակիցը, եթէ մանաւանդ նրա սեռական հակումը չի բաւարարւած, յագուրդ չի ստացած. «Ու մերկ թերովն ու լանջովը փարեցաւ ընկերուհին վիզը, մկաններուն բոլոր ուժովը քաշեց իրեն՝ ուժգին համբոյր գամելով անոր դէմքին կրքի անզուսպ թափով մը: Բաց ծոցէն հոսող կանացի բոյր մը, լեցուն կրծքին մերկ շօշափումը, ու այդ գողդոջուն-կպչուն շըրթունքները Մինէին հակակրանք ազդեցին. կանացի հակալրմանք մը կանացի կրքուսութեան դէմ: և ինքզինքը ազատել ջանալով՝ ոտքի ելաւ անկողնէն . . . Սրուսեակ փակեց թերը, քիթ ու բերնին ընկաւ նորէն անկողնին վրայ, ու դէմքը պինդ թաղած բարձին մէջ սկսաւ բարձր հեկեկալ» («Դիերասանուհին», եր. 105—106):

Մի հոյակապ ներքնատեսութեամբ Շանթի սիրոյ մէջ խելապատակն ու տրամաբանութիւնը վտարւած են: Նրա սիրահարները շատ ժլատ են խօսելու մէջ, երբ նրանց մէջ սիրոյ ջեռացումն է սկսած և ներքինն ամբողջ փոթորկւած: Սիրահարներն առանց որ և ի խօսք փոխանակելու թե թերի շրջում են: Նրանք համակւած են մի հեշտին զգա-

ցումով, որ աւելի խորն է ու խօսուն, քան ճառն ու բանավարութիւնը։ Այդ հեշտին զգացումը սարդի ոստայնի պէս բարակ ու կպչուն թելեր ունի, որ կաշկանդում է մտքի արհեստանոցը։ Այդ թելերի պաշարումը ծնում է ախորժ յուղում, անորոշ երկիւղի պէս մի բան, որ խտիտ է տալիս և խրանեցնում է։ Ի՞նչ անուն կարելի է տալ այդ զգացումին։ — Շանթի բառարանը տակաւին չի գտել այդ անունը։ Կոռթիւն արդեօք, լուսվեան պօէզիա, որն խզելու համար ջանքերն ապարդիւն են երկուստեք։ Երկուսն էլ չեն համարձակւում իրարու աշքերի նայել, իրենք էլ չ'գիտեն թէ ինչու։ Երկուսի ձեռքերն էլ մի տեսակ յուղած են և եթէ խօսեն էլ՝ շինծու, արհեստակոն բառեռ պիտի ծամծմեն։ Կարծես թէ երկուսն էլ յանցանք են գործել և յանցանքի գիտակցութեան ըեռի տակ կարկամել են։ Մինչև այժմ ասածներից հետեւում է, որ Շանթի ստեղծագործութեան մէջ մարմինն ուրոյն տիրող դիրք է գրաւում, մարմինի պաշտամունքը նրա սիրոյ էութիւնն է կազմում, իսկ կրքի մօմենտները — երկու հոգիների փոխարարելութեան բարձրակէտը։

Հետաքրքական է այժմ տեսնել թէ Շանթի հերոսների խելազատակն ի՞նչ օրի է։

* * *

Հէնց այն միջոցին, երբ «երազ օրերի» գիշերօթիկը տարւում է Վարդուհու թովչանքներով՝ հաւատացած որ մի քանի ժամանակից յետոյ պիտի սիրասթափւի, — նա միենոյն ժամանակ իդէալական գործունէութեան երազներ է անընդում Տուրգենևի «Նախընթաց իրիկունը» վէպի ազգեցութեան տակ։ «Իսկ Ելէնան, — բացականչում է գիշերօթիկը, — Աստւած իմ, Ելէնան. պիտի ունենանք այդ տեսակ աղջիկ մը, որ թողնէ կեանքի բոլոր դիւրութիւններն ու բարօրութիւնը՝ երթալու համար իր սիրահարին ու իր սիրահարի գաղափարներուն ետեսն մինչև օտարութեան մէջ, մինչև կէս-վայրենի լեռներու մէջ, մինչև վառողի ծուխին մէջ . . .» (Եր. 23):

Դուրս է գալիս, որ իւր հերոսների պէս Շանթի մէջ ևս հանրական գործունէութեան ծարաւը դեռ վաղուց է բնակալած։ Կուփի տեսնչը, պայքարի միջոցով որ ևէ գաղափարի յազթանակը իրականացնելու փափազը նա յաւէրժօրէն դուրգուրել է իւր հոգում։ «Լեռան աղջկայ» պատանի հերոսն արդէն անընդում է անդուլ կուելու երազներ, ուխտ է դնում ձգտելու անկարելիին և նրան ձեռք բերելու, ինչ գնով էլ լինի։ Փոթորկի ժամին այդ պատանին ուխտում է անձնուրացութեան ուահվիրայ դառնալ։

Բնութեան ահեղ այդ կուփին հուժկու ես կերկպագեմ յափշտակութեամբ։ Ան իմ թարմ սրտիս կուտայ իղձ ու թափ Մեր կարճ կեանքին մէջ անդուլ կուելու։ Եւ ես ոյժ կ'զգամ այդ վեհ վայրկեանին Ուխտեմ բիւր ցնորք ու անկարելին . . .

Իւր լիրիքական ոտանաւորների մէջ ևս Շանթին բաց չի թողնում հերոսանալու այդ ձգտումը։ Նրա բոլոր ինտիմ ապրումները թափանցւած են ինքն իրեն գերազանցելու, ինքն իրենից մի բարձր, մի վսեմ բան դառնալու ակնկալութեամբ։ Տատը պատմում է գիւցազն Մհերի մասին, իսկ տղաները լուռ լսում են նրան։

... Իսկ աղաքը լուռ կը նային իրար
Ու ամեն մէկը կը խորհի ինքնին,
Որ նոր Մհեր մը դառնայ անպատճառ,
Երբ ինքն ալ հասնի անոր տարիքին։

Քնարերգու — Շանթի համար ամենավսեմ իդէալն անձնուրացութիւնն է։ Առօրեայ մանր ու մուսր հոգսերի մէջ ճզմւած, այս օրով ապրող և վաղանցուկ շահերի ու մտահոգութիւնների ներկայացուցիչ անձերը նրան չեն գրաւում։ Նա սիրում է այն աղնիւ մարդկանց, որոնք անձնուրաց են, որոնք իրական, տւեալ աշխարհից դժոնի են և ձգտում են մի բարձր, գերազայն իդէալական կեանքի, որ չկայ, բայց պէտք է լինի, չի կարսդ չ'լինել։ Եւ Շանթը, իբրև հեղինակ, մի կարևոր խոստովանութիւն է անում։

Իսձի համար այն ժամերը թանգ եղան,
Երբ ներջնչւած ստեղծեցի միշտ անգոյ,
Քայց անձնուրաց ազնիւ դէմքեր սիրեկան.
Երբ իրական աշխարհին մէջ միշտ դժոն
Իդէալի կեանքէն երգել ուզեցի.
ևս պատրանքը սիրեցի:

Վերջին տողը լոյս է սփռում Շանթի և իւր հերոսների անձնուրացութեան բոլոր ապրումների վրայ: Եւ իսկապէս Նրանք անրջում են անձնուրացութեան մասին, բայց իրենք իրօք անձնուրաց չեն հոգեբանօրէն և Նրանց համար «ցնորք ու անկարելի» մի բանի նման է սեպհական անձը գոհաբերելը որ ևէ նպատակի համար, որ անձնական նեղ շահերի սահմաններից դուրս է դտնւում: Անձնուրացութիւնը, հանրական գործի համար գոհաբերութիւնը, կամ հէնց աւելի սահմանափակ մտքով՝ անհատական կեանքի մէջ անձնուրաց լինել որ ևէ նպատակի հասնելու համար՝ յանուն սիրոյ կամ մի ուրիշ բանի—Շանթի հերոսների համար անկարելիութիւն է: Նրա հերոսների կամքը ենթարկում է կաթւածի հէնց այն մօմենտին, երբ Նրանք որ ևէ վճռական քայլ պիտի անեն գոհաբերելու նպատակով: Հէնց որ Շանթը ստիպում է իւր հերոսին գոհաբերել, անձնուրացութիւն անել—այդ հերոսը մի շինծու և թխովի դէմք է դուրս զալիս և Նրա մէջ բացակայում է կամ կենսական, կամ բանաստեղծական ճշմարտութիւնը.

...Ու կըմբռնեմ ես.

Նաւն ալ կազմ, անսահ,
Անձկոտ սրտիս պէս,
Բաց ծով կըցանկայ.
Կուզէ սաստկակոծ
Կեանք ու փոթորիկ.
Մինչ ափին անգործ
Կերերայ լոիկ...

Շանթի բոլոր հերոսները Նրա երգած կազմ ու անսահ վիճակում են դտնւում: Նրանք ցանկանում են մըր-

ցութեան դաշտը դուրս գուլ՝ խիզախօրէն արութեան գործեր կատարելու համար, Նրանք ցանկանում են կեանք ու փոթորիկ, բայց աւաղ, Նրանց չի տրւած ներջնչում և ոգեստութիւն՝ պատրանքից գործի անցնելու, մատ մատի խփելու երազածն ու անրջածը իրականացնելու: Նրանք մնում են անգործ, երերում են, տատանւում և վերջը փախուստ տալիս թէ արութեան գործերից, թէ սիրուց և թէ հանրական բարիքից: Նրա անկեղծ, գեղարւեստական և կենսակեան հերոսները դասալիքներն են, որոնք երազում են, բայց բնութիւնից զրկւած են որ ևէ երազ իրականացնելու ընդունակութիւնից.

...Արդ գործ ու ջանք կերագեմ

Ու այդ կիզիչ ծարաւէս

Անյայտին դէմ կը վագեմ:

Շանթը հեռուների կարօտն է փայփայում: Բայց նբանք մի հերոսը չի կարողանում որ ևէ հեռաւորի հասնել և վերջ ի վերջոյ ստիպւած է լինում համակերպւել միջավայրի պայմաններին և իւր անհատական բնաւորութեան, խառնւածքի և կամեցողութեան հարկադրանքներին, որոնք տանում են դէպի անկամութիւն ու անգործութիւն: Համակերպութիւնն է այն տարերքը, որի մէջ իրենց լաւ են զգում Շանթի հերոսները: Հողմաղացի թերի սիմվոլի Շանթը պարզում է ամեն ինչ.

...Ու կեղերգեն

Տիսուր ճոխնչով, հովերու կամքին,

Իր համակերպած արտունջը հեզիկ

Ոյս չարքաշ կեանքէն:

Այսպիսով՝ որոշ չափով մեղհամար պարզում է Շանթի գեղարւեստական գեղեցկի էութիւնը: Նա երգում է անպիսի մարդկանց կեանքը, որոնք իրենց հոգեբանական էութեամբ դասալիքներ են, երազում են անկարելին, բարձունքները, բայց միշտ մնում են մարմնի և վայելքի յօրինած տաքուկ հովիտներում, հովիտներ, ուր տիրականօրէն իշխում են երկու սկզբունք: սեռ և դասալիքութիւն...

ոյս մամնեաց մակովարդի ոյս ուղար պաշար մամնեաց
ու զանք մէ հոգութեաց Ա. զանք արդասաք զանք
և հուշաց եւ նաւու վէ ըստու բառ պարտ օժիշնելով
Այժմ տեսնենք, թէ իւր դասալիքների հոգերանու
թիւնն ինչպէս է ըմբռնում կեսու ծանթը և ինչպէս է
պատկերացնում, որքան կենսական և բանաստեղծական
ճշմարտութիւն կայ նրա ստեղծագործութեան մէջ:

Եանթի դասալիքների հոգերանութիւնն ըմբռնելու
համար մենք առաջարկում ենք հետեւեալ միջոցը: Ոկել
պարզից և գնալ դէպի բարդը: Պարզ ասելով հասկանանք
այս մարդկանց հոգերանութիւնը, որոնք կեանքի հետ գեռ
ամբապինդ կապերով չեն կապւած և կեանքի մասին ա-
ռաւելապէս տեսական ծանօթութիւն ունեն, քան գործ-
նական: Եանթի դասալիքները բոլորը ինտելիգենտ մարդիկ
են, այսինքն անձեր, որոնք ստացել են որոշ կրթութիւն
և իրենց միակ պարապմունքը մտաւոր աշխատանքն է
տեսական կամ գործնական ասպարէզներում: Այդ իմաս-
տով էլ մենք Եանթի դասալիքներին պէտք է նկատի առ-
նենք նրանց ինտելիգենտութեան ստորին աստիճանից
սկսած մինչև ամենաբարձրը: Այս ձեզ կամ միջոցը չի
խանգարի մեր վերոյիշեալ պահանջին, այսինքն՝ պարզից
դէպի բարդը զնալու գործողութեանը և ջանքերին: Ինտե-
լիգենտութեան ստորին աստիճանը կհամապատասխանի
իրական կեանքի հետ պակաս շփումներ ունենալու հնա-
րաւորութեանը և հասակին: Այսպէս օրինակ աշակերտ-
դասալիքը մեր ձևակերպութեամբ կներկայանայ, որպէս
պարզ տիպ և ինտելիգենտութեան նւաստ աստիճան:

Այդ սկզբունքի հիման վրայ էլ աստիճանական կար-
գով բաժանենք Եանթի դասալիքներին հինգ խոշոր կարգի:
Առաջին՝ «Երազ օրերի» հերոսը գիշերօթիկ առակերտ է,
անունն է Երւանդ: Երկրորդ՝ «Դարձի» հերոսը դպրոցը
նոր է աւարտի և դեռ կեանքի հետ խորունկ շփումներ
ունենալու հսարաւորութիւն չունի: Երրորդ՝ «Վերժին»
վէպի հերոսը տակաւին ուսանող է, սովորում է արտա-
ռահմանեան համալսարանում, անունն է Երշակ: Չորրորդ՝

«Դերասանուհին» վէպի հերոսը համալսարանաւաց է,
ալրիւատ գօցենտութեան աստիճան է ստացել, անունն է
Հրանտ: Եւ, վերջապէս, հինգերորդ՝ «Դուրսեցիներ» վէպի
հերոս Բագրատը ուստուցիչ լինելով հանդերձ մի անսակ
հասարակական գործիչ է, այս մաքով, ինչ մաքով որ այս
վերջինս մեր իրակակութեան մէջ ըմբռնուում է:

Այժմ մէկ մէկ վերլուծենք այդ բոլոր հինգ անձերի
հոգերանութիւնը և նրանց դասալիքութեան որակն ու աս-
տիճանը, առաւելապէս ուշք գարձնելով դասալիքի հոգե-
րանութեան, քան դասալիքութեան երևոյթին:

1.

Երւանդը գիշերօթիկ աշակերտ է: Նա պահում է մի
յիշատակարան, որի մէջ արձանագրում է իւր գլխի անց-
քերը և մէկիկ մէկիկ բացայայտում է իւր հոգու որոշ
գծերը: Յիշատակարանը լաւագոյն գրական ձևն է յիշա-
տակագրողի հոգին լաւապէս հասկանալու համար: Նա մի
տեսակ մենախօսութիւն է կամ, աւելի ևս լաւ՝ խօսակցու-
թիւն, զրոյց ինքն իւր հետ, որ դիւրաւ մերկացնում է
հոգու այնպիսի մութ անկիւններ, ինտիմ աղջումներ, որոնք
մի ուրիշի աչքից կարող են վրիպել:

Եւ ահա Երւանդն անկեղծօրէն պատկերացնում է իւր
հոգին, առանց քաշւելու ցուցահանում է իւր հոգու լայ-
ու վատ կողմերը:

Ոնդրանիկ յատկութիւնը, որ գտնում է Երւանդը իւր
հոգեկան կազմի մէջ, դա ներքին հակասութիւնն է, նա
հակասութիւնների մի հանգոյց է ներկայացնում: «Տարօ-
րինակ հակասութիւններ կան կազմիս մէջ,—խոստովանում
է նա, —մէկ ամըշկոտ եմ, տղայամիտ ու համարձակ, մէկ
ալ՝ յանդուզն, հասուն ու անզուսպ. ոչ մէկ զգացումս
միւսին չի բռներ» («Երազ օրեր», Եր. 5): Այս առաջին
յատկութիւնը շատ կարեոր է դասալիքի հոգին հասկանալու
համար: Դասալիքը բնաւորութեան դիսցիլինա չունի, նա
ծայրայեղութիւնների մարդ է, ուրեմն և վստահօրէն նրա
վրայ յենւել չի կարելի, նրա այսօրւան պաշտամունքի և

վաղւանի միջև ցատկումներն էլ միշտ հնարաւոր են, այսօրւան աստւածներին նա միշտ էլ կարող է դաւաճանել և որդեգրւել ուրիշ աստուածների և միշտ էլ նրա հոգու և մտքի մէջ կ'գտնւեն իւր այդ քայլը զովաբանելու, արդարացնելու համար պաշտպանողական խօսքեր, Խօմ միտեղ կանգնած չ'պէտք է մնալ, պէտք է առաջ գնալ — ահա դասալիքի պաշտպանողական խօսքը այն ժամանակ, երբ նրա ներքին աշխարհում «ոչ մէկ զդացումը միւսին չելքոնում» . . .

Բնաւորութեան գիտցիպլինա չունենալով, ծայրայեթիւնների մարդ լինելով՝ դասալիքը անտեղի քայլեր է անում, տաքանում է և սառչում, ոգեսրում է և հանգչում գործից գիւրաւ կերպով, առանց որ և է գժւարութեան եւ, ի հարկէ, միշտ ինքն իրեն զսպել է ջանում՝ ասելով «տաքնալը աւելորդ է. պաղարին պէտք է լինել» (Եր. 17): Բայց նրա այդ յուշարարութիւնները գիտակցական պընդումներ են, որոնք չեն կարող կարգի բերել և կազմակերպել նրա անկարգ և անկազմակերպ հոգեկան ներքին աշխարհը:

Ոգեսրութեան ժամանակ նա ընդունակ է այնպիսի քայլեր անել, որոնք չեն բղխում իւր ներքին յատկութիւններից: Ոգեսրութիւնը հէնց որ պաղեց, նա փոշմանում է և սկսում է ինքն իրեն գատապարտել իւր արածի համար, չնայած որ այդ քայլն անելիս նա համոզւած է եղել, որ մի գեղեցիկ և խրախուսանքի արժանի գործ է կատարում: Մէկ օր նա ոգեսրւած դատապարտում է մի նկարչի և նրա քրոջ անտարերերութիւնը դէպի հայ կեանքը, նրանց օտարամոլութիւնը, բայց հէնց որ տուն է վերադառնում, սկսում է դատապարտել ինքն իրեն ասելով. «Միթէ վարմունքս յիմարութիւն չէր, ինչ օգուտ. բան մը, որ անոնք ինծի հասկնալ չեն կրնար. մենք տարբեր կեանքով ենք մեծցերք Զուր տեղը վրաս ինսդացնելու առիթը տւի անոնց: Հիմա, ով գիտէ, ինչ նեղ գաղափարներու տէր կանւանեն ինծի, ինչ սեղմ հասկացողութեան տէր մարդք: Է՞հ, մտածելը չարժեր» (Եր. 34):

Դասալիքը հոգեբանօրէն վախկոտ է, նա միշտ երկիւղ է կրում այն բանից, որ ուրիշներն իւր մասին վատ կարծիք կ'կազմեն: Թոյլ լինելով՝ նա միշտ երազում է ոյժի մասին, իւր մեծութեան և անպարտելիութեան մասին: Ասում են՝ քաղցածը երազում հաց կ'անոնի: Դասալիքն էլ այդպէս է. նա միշտ ոյժ և մեծութիւն է տեսնում . . . Երազի մէջ: Նա ուզում է մեծ մարդ դառնալ և համոզւած է, որ կ'դառնայ: «Ոչ, ես չեմ կրնար ոչինչ մը լինիր» (Եր. 11) հաւատացնում է ինքն իրեն դասալիքը:

Երկչոս լինելով՝ դասալիքը նախաձեռնութիւնից զուրկ է: Նա իրը թէ սիրում է մի աղջկայ, բայց մատ մատի չի խփում իւր սէրն իրազործելու համար: Նա վախենում է իւր զգացումների յորդ գեղումից, որ կարող է ներքին հակասութիւններով խճողւած նրա հոգեկան կազմի մէջ նոր տակնուվրայութիւն առաջ բերել, հանգստութիւնը խանգարել և նորանոր մտահոգութիւնների դուռ բանալ: Նա հանգստութեան և խաղաղութեան կողմնակից է հոգեբանօրէն: Հէնց որ ուզում է աղջկան որ և է ակնարկութիւն անել իւր սիրոյ մասին, լեզուն կարկամում է և յետաձգում է վաղւան իւր անելիքը: Ինչու չէ այդ քայլն անում. «Միթէ գուցէ ծաղրելէ կը կասկածիմ, — մտածում է երւանդը, — թէ իր զգացումներուն վրայ դեռ վսահն չեմ. կարելի է և առաջին քայլի գժւարութիւնն է այս» (Եր. 79):

Ներքին հակասութիւններով լեցուն բնաւութեան առանձնայատկութիւնն է տատանումն ու տարրութերումն երկու վճիռների մէջ: Երւանդն ուզում է մի խիզախ քայլ անել աղջկայ հանգէպ, բայց ինչ որ ձայն նրան արդելում է. «Եւ ուզեղս այդ երկու հրամաններուն մէջ տարրութեր՝ կ'վարանէր դեռ» (Եր. 82): Նա, վերջապէս, համոզում է, որ ձեռներեցութիւնը միշտ և ամենուրեք իւր սիրած աղջկան է պատկանում, «աղջիկը յարձակողական գիրք ունի, ես՝ պաշտպանողական» (Եր. 83), խոստովանում է նա:

Տեսականապէս մեր գիշերօթիկը բաւական համարձակ և յանզուգն մարդ է: Նա միշտ մտածում է որ և է քայլ

անել, որ և է հարկաւոր գործ կատարել, բայց միշտ էլ կիսաճանապարհին կանդ է առնում ասելով «այդ մտածմունք մըն է, որ չիրագործւիր. այս տեսականն էր, որուն գործնականը գտնել պէտք էր» (եր. 107):

Սնգործնականութիւնը մղում է դէպի անուրջ և պատրանքամոլութիւն: Նա երազում է և երազի մէջ իրեն տեսնում է կատարեալ էակ դարձած, ոյժի և կամքի հերոս հոչակւած: Նա անըջում է հզօրութեան մի ակտ կատարել. «ինծի այնպէս կը թի, թէ Վարդուհին է գերկս, որ կը ծքիս սեղմած հեռու, հեռու կը փախցնեմ... ձին կը թուչի...» (եր. 95): Նա երազում է և երազի մէջ իրեն Սիւնեաց իշխան է երկակայում, իսկ իւր սիրուհուն Գուգարաց օրիորդ...» (եր. 65):

Երազամոլութիւնը նրան հասցնում է հալիւցինացիայի, այսինքն մի հոգեկան վիճակի, որի ժամանակ նա տեսնում է բաներ, որ իրօք չկան: Նա տեսնում է իւր սիրուհուն առաջը կանգնած այն ժամանակ, երբ վերջինս հարիւրաւոր վերստերով հեռու էր նրանից. «Պատկերը հետզհետէ որոշիլ սկսաւ, իր դէմքի իւրաքանչիւր գիծը կը յիշեիրայց ինչ յիշել. այդ նոյն ինքն է, ինքը՝ Վարդուհին դէպի ինծի հակած, ձեռքը յենած ուսիս: «Վարդուհիս» կը բացականչեմ ես խելազար ու վեր կը ցատկեմ վիզը փաթթւելու... Հիասթափում» (եր. 160):

Երւանդը բութ է մի ուրիշի հոգին թափանցելու գործում: Նա անում է այնպիսի քայլեր, որոնք խայթում են սիրած աղջկայ հոգին. բայց նրա փոյթն էլ չէ: Նա ուզում է շոյել իւր ինքնասիրութիւնը, պարծենալ ինքն իւր առաջ, որ մի աղջկայ գերել է և ստրկացրել իրեն: Երկար ժամանակ նա տեսակցութիւն չի ունենում աղջկայ հետ և տեսէք թէ ինչ սպասելիքներ ունի. «Ես մինակ բան մը կը սպասէի. բուռն կարօտ, զսպւած յուզումներ, գուցէ, բարկութիւն, յանդիմանութիւններ...» (եր. 98):

Երւանդի հոգեկազմի պատկերը լրացրած կ'լինենք, եթէ ասելու լինինք, որ նա հիստերիկական լացի ջերմ հակում ունի: Եւ այդ լացն աւելի անզուսպ է դառնում,

երբ ոչ ոք ներկայ չէ, «ոչ ոքէ քաշւելու» հարկադրութեան մէջ չէ (եր. 128).

2.

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ յատկութիւններ է հանդէս բերում գիշերօթիկ աշակերտը, երբ նա արդէն շրջանաւարտ է: Այդ շրջանաւարտը Սիրաքեանն է, «Դարձի» հերոսը:

Սիրաքեանն իրեն շատ անյարմար է զգում կանանց հասարակութեան մէջ: Նա մի տեսակ քաշւում է և վարանում, երբ որ և աղջկայ հետ մենակ է մնում. «անորոշ վախ մը անյարմար կամ անպատշաճ բան մը ընելու. ինքինքը ի՞նչպէս պահէ և ի՞նչ խօսի» (եր. 45):

Նա իրեն շատ լաւ է զգում միայն համակիրների շրջանում, երբ վստահ է, որ իրեն շրջապատում են ծանօթ մարդիկ, որոնք իրեն լաւ են ճանաչում, իւր մասին լաւ կարծիք ունեն: Մեզ այնպէս է թւում, որ այս տիպի մարդիկ պայքարող խառնւածք ունենալ չեն կարող և հէնց որ կուի ասպարէզ ըացւեց՝ պիտի գասալքութիւն անհն: Սիրաքեանը մտնում է մի ծանօթ ընտանիք և իրեն այդտեղ շատ լաւ է զգում, որովհետեւ «կ'զգար, որ իր մասին խօսք էր դարձած այս տան մէջ, և որ անոնց վրայ նպաստաւոր տպաւորութիւն ըրած էր» (եր. 38):

Կուի մարդ չէ Սիրաքեանը և հոգեբանօրէն կոիւը նա չի կարող սիրել: Նա տպաւորուղ է, ամեն բան սրտին մօտ է առնում և իւրաքանչիւր վէճից յետոյ անհանգըստութեան մէջ է իրեն զգում և գիշերն էլ չի քնում, տանջլում է անքնութիւնից: «Գիշերն ալ շատ ուշ և շատ անհանգիստ էր քնացեր, թէն խկապէս լուրջ ոչինչ մտածած չէր. Քանեանի (որի հետ վիճել էր. Ա. Տ.) մէկ-երկու նախադասութիւնները կը կրկնէին շարունակ իր գանգին տակ» (եր. 20):

Այսպիսի հոգեկան կազմ ունենալով, բնական է, որ նա ամեն չնշին բան սրտին մօտ է առնում և անտարբեր ու խաղաղ լինել ներքուստ, ինքն իրեն չ'կորցնել—նրան

չի յաջողւում, չնայած որ «հնար եղածին չափ ինքինքը անփոյթ ցոյց տալու ճիգով մը» պարապում է կամ, աւելի ճիշտ ասած՝ բռնադատում է իրեն:

Հոգեբանօրէն անգործնական լինելով՝ նա խօսքի հերոս է, նա ոգերուում է ճառելու ժամանակ, որպէս «միամիտ ու սեմինարի օդով մնած» մի տղայ: Ճառ ասելիս նրա աչքերը ոգերութիւնից «կայծկլտում են» (Եր. 15):

Հոգեկան շատ թեթև բազաժի տէր լինելով՝ նա աքը լորանում է, զգում է ինքնաբաւականութիւն, երբ իրեն գովում են: Նոյնն է պատահում նրա հետ, երբ ֆիզիքականն են գովում. «Երիտասարդը բուռն հաճոյք մը զգաց յանկարծ այդ զովեստէն, այդ իր ֆիզիքական ոյժի զովեստէն: Սիրտը սկսաւ վայրագ բարախել» (Եր. 52):

Երւանդը, «Երազ օրերի» հերոսը դասալիքի հոգեբանական տւեալներ ունէր, իսկ նրա հոգեկից Սիրաքեանն արդէն կատարեալ դասալիք է: Ուսումնասիրենք այդ դասալիքի կեանքն ու գործը:

Սիրաքեանն ուզում է վարդապետ դառնալ: Բայց դասալիքը հէնց առաջին քայլին տատանման մէջ է գտնւում և մինչև անգամ ծաղրում է իւր կոչումը: «Ի հարկէ, — ասում է նա անպատկառութեամբ, — անմիտ բան է կուսակրօնութիւնը արդէն. բայց ինչ կարելի է ընել, եթէ յանձն առիր՝ խաչդ պիտի կրես» (Եր. 49):

Սյստեղ, ի հարկէ, հարցը կուսակրօնութեան լաւ կամ վատ բան լինելու մէջ չէ, այլ այն թեթև վերաբերմունքի, որ դասալիքը ցոյց է տալիս դէպի իւր ուխտը: Դասալիքը միշտ իրեն անձնազո՞ն է ցոյց տալիս, մինչդեռ այդ ապօբանքից նրա խանութում չկայ և ոչ մի պայմանով լինել չի կարող: Նա իւր կոչման ծանրութիւնը թւաբանական թւերի է վերածում ինքն իրեն արդարացնելու համար: Նա դանում է, որ մեռած ծէսերին պիտի նւիրի 1460 ժամ «այն ալ օրւան ու աշխատանքի ամենաթարմ ժամերէն» (Եր. 66):

Նա իւր կոչումից ամաչել է սկսում, երբ ուրիշների բացասական կարծիքն է լսում այդ կոչման մասին: Երբ

նա ուզում է վախչել որ և է խոստում կատարելու պարտաւորութիւնից ուրիշների թելադրութեամբ, միշտ հաւատացնում է, որ այդ բանը «Ես առաջ ալ տարտամ կերպով միշտ մէջ ունեցած եմ»: Դասալիքը միշտ գործիք է մարդկանց և հանգամանքների ձեռքին, բայց միշտ էլ ինքն իրեն ներշնչում է «իմ գլխուս տէրը ես եմ» (Եր. 89): Եւ այդ պնդումի յաւէրժօրէն կրկնողութիւնը մատնում է մի ճղճիմ կամազրկութեան հանգամանք: Նա ներքուստ զգում է իւր թուլամորթութիւնը և խոստվանում է, որ «ուժեղ բնաւորութիւնները շատ կարեն» (Եր. 90): Նա պարծենեկու էլ է: «Ես իմ ընկերներուս մէջ միշտ մասնաւոր դիրք մը ունեցած եմ, — զոռոզանում է դասալիքը, — և այդ ինձի շողոքորթած է. ուրիշ բան է զգալը, որ շըջապատողներուդ վրայ ազդեցութիւն մը ունիս. մարդ կարծես ոյժ կ'զգայ իւր մէջը. և հիմա կ'գիտակցեմ, որ իմ վարդապետանալու որոշմանը շատ նպաստած է այդ զգացումը...» (Եր. 91): Եւ այդ խօսքերն ասում է մի մարդ, որ հէնց առաջին պատահողին ենթարկւեց՝ կորցնելով ամեն ինչ՝ և «վարդապետանալու որոշում», և ինքնուրոյնութիւն: Ինքնուրոյնութիւնից միանգամայն զուրկ լինելով՝ նա ինքնութեան ասպետ է ձևացնում իրեն. «Իմ գործերիս դատաւորը ես ինքս եմ», ճամարտակում է նա (Եր. 100):

Դասալիքի հոգին տրագեդեայ չունի, նա մի աթոռից միւսն է թոչում, մի գաղափարի երկրպագութիւնից միւսն է սննդում առանց հոգեկան տանշանքների: Ընդհակառակը, մի բեռ հէնց որ ուսից ձգում է, թեթևութիւն է զգում: «Եւ տղան յանկարծ մտաբերեց, որ ինքը այլ ևս հոգերական չէր. վեղաբար ապագան, խուցի չոր կեանքը, միայնակ ու միակերպ, եկեղեցական պաշտամունքներն իրենց խունկերովն ու սազմուներովը, այդ բոլորն ալ երազ մըն էր իրեն համար. անցած երազ մը, ուրկէ հիմա կարթըննար» (Եր. 105):

Դասալիքը ստնահարելով իւր վսիգեմի պաշտամունքները՝ միշտ յոխորտում է, թէ այդ բանն անում է աւելի բարձր նպատակի համար: Մի որ և է կոչման դժւարու-

թիւնների դէմ ոյժ չունենալով կռւել, նա երազում է այդ ոյժերն ունենալ, ձեռք բերել վաղւան համար, Բայց անցեալի թուլամորթութիւնը մի պարզ ապացոյց է վաղւան ապիկարութեան համար: «Հիմա իմ տենչանքսէ, — ասում է Սիրաքեանը, — կռւով, կեանքի մէջ, իմ սեփական ուժերովս ինծի համար ճամբայ բանամ: Կռւակրօնի այդ պատրաստ, լայն ու հանգիստ ճամբէն քալելը քաջութիւն չէ: Դուն ինչ կռւզես ըսէ, ես մէջս ոյժ կ'զգամ, և ալ պատրաբեր չէմ համարել վեղարի հովանիխն տակ մտնելը» (Եր. 112):

Որ է պաշտամունքից հեռանալով՝ դասալիքն իւր առաջին պարտաւորութիւնն է համարում նսեմացնել նրա արժէքը: Այն դրդապատճառները, որոնք մղել են նրան հոգեոր կոչումն ընդունել, այժմ նրա աչքին երևում են, որպէս «թուքով փակցուցած քանի մը բաներ» (Եր. 113): Դասալիքը բեռը վրայից ձգելուց յետոյ, երբ մէջը սոր աշխոյժ է զգում, իւր սիրուհուն, որին իսկապէս պատկանում է այդ քայլի նախաձեռնութիւնը, ասում է. «Ես հաստատ զիտեմ այս վայրկեանիս ու կընամ ձեզի խօսք տար, որ ինձմէ բան մը դուրս պիտի դայ» (Եր. 141):

Տայ Աստած, որ այդ գուշակութիւնը ճիշտ լինի, թէն մենք անձամք համոզւած ենք, որ դասալիքի նոր գործը պէտք է լինի մի նոր դասալքութիւն... այժմ սիրոյ նկատմամբ, ինչպէս կ'տեսնենք քիչ ներքեա Սիրաքեանի հոգեկիցների բնոյթագիծը տալիս:

3.

Արշակը—«Եւրոպայէն նոր եկած, ուսանողի անունով, ազատախօս, տաքարիւն, խոշոր-խոշոր բրդող», այսպէս է բնորշում մեր երրորդ դասալիքին իւր մտերիմ ընկերը:

Արշակը սիրում է մի աղջկայ և ի լուր աշխարհի յայտնում է, որ պատրաստ է ամենատեսակ զոհաբերութիւն յանձն առնել յանում իւր այդ սիրոյ: Հետաքրքրական է նկատել, որ նանթի բոլոր ճղճիմ դասալիքները ճառում են միշտ զոհաբերութեան անունից, բայց անկարող են որին:

անձնուրաց քայլ անել: «Ոյդ աղջկայ մասին մտածել,— ասում է Արշակը, — ամեն կերպ անոր օդնել, հասցնել իր արժանի բարձրութեան, զոհել անոր համար ուժերում մէկ լաւագոյն մասը, զոհ ու երջանիկ ընել, ահա ինչ կեռայ զլսուս մէջ» («Վերժին», Եր. 66):

Խելապատակի կողմից Արշակը բաւականաչափ գարգացած մի աղայ է: Նա ունի գեղեցիկ դիտաւորութիւններ, սրաի մէջ եռում են հազար ու մի առաջադիմական ցանկութիւններ: Կանանց հարցի մասին ունի ազատախոհ հայեացքներ, ժխտում է գեղեցիկ սեռի մասին տարածւած շատ ու շատ անհիմն կասկածներն ու թիւրիմացութիւնները: Նրա կարծիքով կինն ևս ընդունակ է մեծագործութեան, նա ևս ընդունակ ու կարող է տղամարդուն համահաւասար կերպով գործել ի նպաստ հասարակաց բարւոյն: «Ա՛—բացականչում է մեր իդէալիստը, — աղջիկ ու տղայ ձեռք ձեռքի, տափկա բոլորավին նոր ու հզօր հոսանք մըն է հասարակութեան մէջ, քան ատոնցմէ մէկը առանձին» (Եր. 73):

Արշակը հրապարակախօսութեամբ էլ է զբաղւում, հրապական լուսաւորութեան տեհաններն է ձգտում պատաստել մեր կեանքին լրագրութեան միջոցով, աշխատում է հերքել մեր հասարակական սխալ ըմբռնումներն և ընկերական տափակ հայեացքները: «Ա՛,— զարձեալ բացականչում է մեր հրապարակախօսը, — ինչ հաճոյք է սխալ ու ծուռ, բայց արմատացած գատաղութիւններու, սովորութիւններու, նախապարումներու վրայ յարձակիլը. ծաղըել, բգկտել քայրայէլ ու դէմը զնել հարցի իսկական վերլուծութիւնը, բնականը, գիտութեան ապացուցածը: Մարդ կարծես տարօրինսկ բանի մը իր ջիղերուն մէջէն վազելը կ'զգայ այդ վայլկեանին, է, իգուր բան է, մարդկութիւնը առանց կռւի ապրել չի կընար . . .» (Եր. 81—82):

Ճղճիմ քարոզիչը հնց որ խօսքից կամենում է գործի անցնել, իւր բոլոր տեսութիւնները ծալում է և գրպանն է գնում: Նա պաշտելով պաշտում է կռիւր, բայց ինքն առաջինն է, որ խուսափում է կռւից կեանքի մէջ և անդորր

ու խաղաղ կենցաղի երկրպագու է: Նա կնոջ ու տղամարդու յարաբերութեան լաւագոյն ձևերի կողմանկից է, սիրոյ մէջ բարձր սկզբունքների ջատագով է, բայց իրականութեան մէջ երկու հոգիների փոխաղարձ կապի համար արտաքին հանգամանքների կարիքն է զգում: «Գեղարւեստական շորհը մը չունիմ, նւագ մը չփառեմ, երգել անգամ չեմ կրնար, ոչ ձիրք մը, ոչ տաղանդ... կայ մէջս բան մը, որ ուրիշն անմիջապէս հրապոյր պատճառէ, զրաւէ...» (Եր. 117):

Ամեն բան պէտք է պատրաստ կերպով դնել այդ հոյակապ դասախոսի առաջ, որ նա վայելել կարողանայ, հակառակ դէպքում՝ նա չ'զիտէ ինչ անել: Նա ուրիշներից է գանգատում. բայց ինչ որ ուրիշի մէջ է մտնում, իւր մէջ մեծ չափով է դրւած, «Ի՞նչ պոռոտախօս էակներ ենք մենք, — դարձեալ բացականչում է մեր ճառախօսը, — մենք՝ մարդիկս, մեր որշումներու, դիտաւորութիւններու ու վճռուներու խոշոր բառերովը նիզակաւորւած, իսկ էապէս. անուժ խրտւիլակներ» (Եր. 124):

Ճիշտն այն է, որ Արշակը իրապէս մի անուժ խրտւիլակ է և նրա վերի բառերի մէջ իւր անձի առարկայացումն է հանդէս բերւած: Իւր հոգեկիցների նման նա ևս պարձենեկոտ է և փքուում է չունեցած առաւելութիւնների համար: Ելի լաւ է, որ երեխնապէս նա խղճի խայթ է զգում և դիտակցում յատակօրէն, որ մարդկանց աչքերին փոշի է փչում: Հոգու պայծառացման այդ վայրկեաններից մէկում՝ «Արշակ յանկարծ բուռն ամօթ մը զգաց: Ի՞նչպէս ինքը բոլոր ժամանակը պարապ միայն իր եսովն էր զբաղւած և ինչպէս հիմա ինքնպինքը աղջկան կ'ներկայացնէր գործին նւիրւած մարդու ձևեր, անձնագոհութեան հովեր կառնէր վրան» (Եր. 126):

Դարձեալ կրկնենք, որ անձնագոհութիւնը բոլոր դասալիքների համար մի անմատչելի բարիք է, որի շուրջը նրանք կարող են սիրուն ճառեր տել, ոչ մի անձնուրացքայլ չանելով միանգամայն: Փաստը առաջներս է: Արշակը սիրում է մի աղջկայի միանգամայնը, քաղցրութիւն եղած էր այն մտածումը, թէ աղջիկը վշտանար, ցաւէր պիտի, հիմա ան-

ձգտում է դէպի նա, կամենում է իրականացնել իւր սէրը: Բայց մի փոքրիկ մի չնշին խոչընդուած: և ահա պատրաստ է խուսափումի և դասալիքութեան ճամբան: Աղջկայ եղբայրը մի նեղմիտ ակնարկ է անում Սորշակի և իւր քրոջ փոխադարձ յարաբերութեան մասին և դա բաւական է, որ մեր դասալիքի հոգեկան հաւասարակշուութիւնը խախտի և նրան թելադրի հետևեալ տողերը գրելու. «Ես իմ կողմէս ջանալու եմ ասկէ ետքը աւելի ևս ձեզմէ խոյս տալու, ինչպէս ինքներդ արդէն շատ ճիշտ նկատեր էիք, իսկ դուք, ազնիւ օրիորդ, մոռցէք մեր մէջ եղած պգտիկ անցեալը և ներեցէք իմ ակամայ գրած այս նամակը» (Եր. 139):

Դասալիքն ամենամեծ սովեստն է: Նա իւր դասալիքութիւնը որեէ կերպ պէտք է պատճառաբանի և ինքն իրեն արգարացնի: Արշակի դասալիքութիւնը աշկարայ մի փաստէ, հոգեբանօրէն հիմնաւորւած և նա ուրիշ կերպ էլ լինել չէր կարող՝ նկատի առնելով նրա հոգեկան բնորոշ առանձնայատկութիւնները: Բայց տեսէք, որ մեր դասալիքն իրեն բարոյական նահատակ է ձևացնում, «Ես պարտաւոր եմ» իմպերատիւփ ներկայացուցիչ է իրեն համարում: Իբր թէ նա իւր դասալիքութիւնը ձեռնարկել է ընկերոջ երջանկութեանը խոչընդուած չ'ինելու համար, մի ընկերոջ, որ դարձեալ սիրում է յիշեալ աղջկան... Ո՞վ հաւատաց: Փաստը մնում է փաստ, որ Արշակը աղջկայ հանդէպ մի քայլ է արել, որ «Երկիւղ և փախուստ» է միանգամայն. այդ բանը հատկանում է և աղջիկը և հէնց այդ բառերով էլ ճշտապէս որակում է նրա արարքը (Եր. 146):

Դասալիքը սովեստ լինելուց բացի՝ միաժամանակ և մնափառ է: Նա կամենում է աղջկան հասկացնել, որ ինքը մեծ գոհաբերութեան ընդունակ ոմն է, որ ինքն իւր եսը գոհել է ընկերոջ բախտի համար: Աղջիկն այդ բանն իմանալով՝ աւելի ևս պիտի սարկանար դասալիքին, իսկ վերջնաս հոգով ստրուկ լինելով ճիշտ հաճոյք է զգում ստրուկների հասարակութեան մէջ: Արշակը հիմա զգում է, որ «Երեն համար միանգամայնը, քաղցրութիւն եղած էր այն մտածումը, թէ աղջիկը վշտանար, ցաւէր պիտի, հիմա ան-

կը գիտակցէր, որ իր վարմունքին մէջ տեսակ մը սնաւ փառութիւն ալ կար, կուզէր, որ աղջիկը նկատէ, հասկնայ իր ըրած հակայ զոհաբերութիւնը և երկուքի համար աւելի թանկ ըլլայ այդ զգացումը» (եր. 157):

Երբ աղջիկը քաջաբար յետ է մզում նեղ հոգի դասալիքին, վերջինս սկսում է երազներ տեսնել և իւր փառասիրութիւնը զուրգուրել սնամէջ և ծիծաղելի զրութիւններով: Նա արդէն երազում է, որ աղջկայ և իւր միջն պատահած տղեղ դէպքը մի կերպ կ'հարթւի, որ աղջիկը կ'գայ արտասահման սովորելու համար, որ ինքը նրա հետ դարձեալ սիրային կապերով կօղակւի և ապա «կաշխատին ալ ձեռք ձեռքի. ինքը անձամբը թեր առած կ'տանի դասախոսութիւններուն, իր հետը, իր քովը և ուսանողները սքանչացած աչքերով կ'դիտեն իրենց ետևէն «սիրուն հայունին» . . . (եր. 170):

Երազն ի բարին կատարի . . .

4.

«Դերասանունին» վէպի հերոսն ևս Արշակի հոգեկիցն է: Այդ հերոսի անունն չըանտ է, պըրիւատ դօցենտութեան աստիճան ունի:

Հըանտն իրեն գիտնական է համարում, գուցէ գիտնական էլ է, Տէրն իւր հետ: Բայց նրա գիտական բացատրութիւնների մէջ յատակօրէն ցոլում է գասալիքի ամբողջ ներքին աշխարհը: Այսպէս օրինակ. նրա առաջ կանգնած է մի իսկական արտիստուհի, որ ոգեսրւած, խանդավառութեամբ խօսում է իւր արւեստի և ներշնչումի մասին: Մեր գիտնականն այդ բոլոր ոգեսրութիւնն ու խանդավառութիւնը, ներշնչումն ու հոգու փոթորկումը ջղային հիւանդութիւն է համարում. «չէ, այդ աստիճան վերանալ, էքստագի հասցնել ինքզինքը, այդ արդէն ջղային հիւանդութիւն է» (եր. 13):

Տարւել ամբողջապէս որևէ գաղափարով ու գործով, ապրել ներքին դող ու կենսաթրթիո զգացումներ—այդ բոլորը դասալիքի համար անմատչելի մի բան է, որովհետեւ

նա հոգեբանօրէն օգտապաշտ է և նրա իւրաքանչիւր քայլը մի մերձաւոր նպատակի է ուղղւած: հեռուների կարօտի մասին նա կարող է երազել, բայց օրգանապէս նա անընդունակ է ձգտելու հեռւին: Դասալիքը տափակ քարոզիչ է անխառն ներշնչումի հանդէպ և ամեն բան նա իւր ներքին ունակութիւնների չափով է կշռում, այդպէս էլ ներշնչումը, որ նրա կարծիքով ոչ այլ ինչ է, բայց եթէ «սխալ մը ընելու վախ», ուրիշներուն հաճոյանալու ձգտում, գովասննք լսելու հաճոյք, ու սովորական փառասիրութիւն, ուրիշ ոչինչ» (նոյն տեղ):

Որ դասալիքը փառասէր է, մենք դրա ապացոյցները տեսանք Հրանտի հոգեկիցների նկատմամբ: Եւ պարզ է, որ մեր զիտնականն ևս ամենուրեք փառասիրութիւն է տեսնում, նոյնիսկ տաղանդի խանդավառութեան մէջ, որ ամենկին առշնչութիւն չունի գուեհիկ օգտապաշտութեան հետ, ուրեմն և «սովորական փառասիրութիւն չէ», ինչպէս պնդում է այդ պրիւատ դօցենտը:

Փառասէր լինելով՝ դասալիքը ուղում է, շատ է ուզում տիրել իշխել ու ղեկավարել, ունենալ ոյժ ու կամք, բայց գժեախտաբար այդ բոլորից էլ նա զորկ է. «Տիրել և ոյժ . . . ընութիւնը ոյժ է միայն, ընութեան երևոյթներն ալ տիրելու կոիւ . . .» (եր. 16): Բնագէտ դասալիքի այդ խօսքերի մէջ գուցէ անկեղծութիւն էլ կայ, գուցէ նա անկեղծօրէն է ձգտում ոյժի և արտապետութեան: բայց նվ է տւել մեղաւորին արքայութիւն . . . Դասալիքի մէջ ընութեան ձայնը, ներքին հակումը ստորագրւած է գիտակցական շահին: միշտ ընութիւնից է նա խօսում, բայց շատ քիչ բնական բան կայ նրա մէջ: Պրիւատ դօցենտը սէրը վեր է ածում սեռական ընտրութեան, երկու սեռերի փոխարերութեան խսդիրը ըմբռնում է այնպէս, ինչպէս որ կայ ընութեան մէջ անխտիր բոլոր արարածների համար: Բայց այդ բոլորը թէօրիսա է, աշխարհայեացք, բայց ոչ կենսահայեցողութիւն: Բնական մարդու պարզութիւն չկայ նրա մէջ, նա չի կարող որևէ զգացումով տարւել. սէրը նրա մէջ ստորագրւած է զանազան հաշիւների, ինքնուրոյն

ու զեկավար մի ոյժ չի ներկայացնում, գիտակցութեան և զիրքի վրայ չի իշխում, այլ ընդհակառակն այս վերջիններին է ենթակայ:

Բայց ուրիշ բան է, երբ որ դասալիքը ճառում է սիրոյ մասին: Նա շատ գեղեցիկ խօսքեր է ասում, շատ ճշմարտապատռմ տեսութիւններ է յօրինում: Հրանտն այն կարծիքի է, որ անկեղծ զգացումը, սիրոյ ճշմարիտ հակումներկար ու բարակ հաշիւնների հետ գործ չունի, Շատ գեղեցիկ միտք, ի՞նչ կարելի է ասել՝ դրա գէմ: Այժմ տեսութիւնից անցնենք գործնականին:

Հրանտի սիրում է և խոստովանում է ոգեորուած կերպով իւր սիրուհու առաջ: «Ինձի նայէ, — ասում է Հրանտը աղջկան, — հաւտա, որ այս քանի ատեն է ոչ շնորհքով աշխատիլ կրնամ, ոչ ալ տեղ մը հանգիստ մնալ, ոչ ուզածս կը հասկրնամ, ոչ զգացումներս: Զէ, այս ապուշ վիճակը ևս շարունակել չեմ կրնար. չեմ ուղեր» (Եր. 62):

Առն Շանթը ինքն իւր կողմից հաւատացնում է ընթերցողին, որ Հրանտն անկեղծ կերպով սիրում է և նրա ներքին աշխարհը փոթորկւած է սիրոյ զգացումի շնորհիւ, նա հազիւ հազ է զսպում ինքն իրեն, հազիւ հազ է կարողանում տէր մնալ «իր ուսուղ զգացումներուն, որոնք դուրս յորդիլ կը ձգտէին» (Եր. 61):

Բայց ինդիրն այն է, որ Հրանտի սէրը անշահ չէ: Նրա սիրոյ մէջ թագնւած է ինչ որ էգօիզմ, ինչ որ պայմանականութիւն, որ ճարպիկ կերպով քօղարկել է ձգտում: Սէրն ու կինը նրա համար ինքնանպատակ երկոյթներ չեն, այլ միջոցներ կեանքի ու հանրական դիրքի յարմարութիւններ ստեղծելու համար, նա սիրում է եսատէր մարդուն յատուկ վայելչամոլութեամբ: Նա իւր սիրած աղջկան ասում է: «Բայց ի՞նչ կեանք կ'լինէր, քու սրամիտ ու չարաձի հոգիդ միշտ աշխատութեանս սեղանին շուրջը, քու ժամփատ ու քրքիջդ սենեակներուս մէջ, հոն եւրոպական կեանքին մէջ, միշտ ձեռք ձեռքի» (Եր. 63):

Մենք տեսանք, որ Հրանտի հոգեկից Արշակն ևս մօտաւորապէս նման երազներ էր տեսնում, ուզում էր իւր սիր

բուհու գեղեցիկութիւնը ցուցահանել՝ իւր ինքնասիրութեանը յագուրդ տալու համար:

Էգօիզմի հետ միասին Հրանտի սիրոյ մէջ կայ և պայմանականութիւն: Քիչ առաջ մենք նրանից մի ճառլսեցինք, որում նա պնդում էր, թէ սէրը զանազան հաշիւնների հետ գործ չունի, հաշիւններ, որոնք ըստ էութեան չեն վերաբերում և նրանից չեն բղխում ու հետևում: Ասացինք, որ դա թէօրիան է, որին հակասում է Հրանտի գործնականը: Նա իւր թէ անկեղծ սիրում է, բայց իւր սիրուհին դժբախտութիւն ունի զերասանունի լինելու և իւր արւեստը պաշտելու: Եւ ահա մեր բնագէտ գիտնականը իւր սիրոյ իրագործման միակ արգելքը գտնում է իւր սիրուհու արտիստական կոչման մէջ և այնպիսի ծիծագելի պատճառաբանութիւն է մէջ բերում իւր պնդումը հիմնաւորելու համար, որ մերկացնում է դասավիքի հոգու ամբողջ դատարկութիւնը: «Միակ իսկական արգելքը քու գերասանունի լինելդ է, — ասում է նա աղջկան, — Դերասանունի մը չեմ կրնար ես իմ կեանքիս ընկեր ըներ. այդ իմ կարողութենէս վեր է» (Եր. 82): Դուք ուզում էք իմանալ պատճառը, թէ ինչու զերասանունին չի կարող գիտնական բնագէտի կինը լինել, ի՞նչ խոչընդուռ կայ դրա առաջ, մանաւանդ որ պրիւատ գօցենաը սէր ասելով «սեռական ընտրութիւն» է հասկանում: յար և նման անրան անսատունների մէջ եղածին: Մեր բնագէտը ինքը բացատրում է այդ պատճառը: Դուրս է գալիս, որ նա վախենում է իւր ապագայ խանդուութիւնից, երբ կինը բեմի վրայ պիտի խաղայ «ամենքի դիտակներուն տակ» և բնակնարար պիտի ունենայ յարգողներ, որոնք այսպէս թէ այնպէս պիտի իրենց յարգանքների հաւասարիքը ներկայացնեն տաղանդաւոր զերասանուենուն: «Գուցէ ծիծաղելի է այս խանդուութիւն, — ասում է Հրանտը, — գուցէ նոյն իսկ ասիական, ինչպէս կ'ըսես, ու կիրթ զգացումներու չի վայեր. չգիտեմ. այդ բոլորը ես ալ եմ խորհած, բայց խորհելէն ոչինչ չենէր, ժառանգական բնագդներու է փաթթւած» (Եր. 83):

Միշտ այդպէս է դասալիքը: Նա իւր անձնական երկ-չոտութիւնը խոստովանել չի ուզում և փախուստի դիմելիս
մեղքը միշտ ձգում է կամ համգամանքների վիզը, կամ այսոց
շնորին: Դասալիքի համար ծանր է անկեղծ լինելը, որով-
հետեւ այդ անկեղծութիւնը կ'մերկացնի նրա հոգու աղքա-
տութիւնն ու բնածին երկչոտութիւնը: Նրա պատճառա-
բանութիւնը համոզիչ չէ: Մեր պրիւատ դօցենտի հոգեկից
Արշակի սիրուհին գերասանուհի չէր և թւում էր, թէ նրանց
սիրոյ իրականացման հանդէպ ոչ մի խոչընդոտ չկայ.
բայց դասալիքը այդ գէպքում ևս մի պատրուակ ճարեց
և իւր փախուստը հիմնաւորեց: Հրանտը իրեն մեղաւոր
չի համարում, նա մեղքը մերթ փաթաթում է «ժառան-
գական բնագդների» վզին, մերթ դատապարտում է աղջկան,
որ չի ուզում զիջող լինել և թողնել գերասանութիւնը:
Հետաքրքիր է դասալիքի տրամաբանութիւնը: Նա կարծում է
թէ տաղանդն ու ներշնչումը զոհաբերելու գործը մի դիւ-
րին բան է. ինքը չի ուզում մի տարրական նախապաշտ-
մունքից ձեռք վերցնել: իսկ իւր սիրուհուց պահանջում է
զոհել անկարելին, կեանքի իմաստն կամ հոգու գեղեցկու-
թիւն, որով ապրում ու շնչում է և առանց որի նա կ'լինի
մի մարմին, որից խլւած է կենդանարար հոգին, մի դիակ,
որից աստւածային շունչը գուրս է թռել . . . Եւ ահա սկսում
է հրանտը իւր մեղագրական ճառը աղջկայ դէմ, մի աղջկայ,
որ այնքան լաւն է, այնքան անկեղծօրէն սիրում է, բայց
օրգանապէս անկարող է իւր արւեստը թողնել, որովհետեւ
դա փեշակ կամ հագուստ չէ, որ փոփոխելի լինի. «Է՞,—
բացականչում է մեր դասալիքը, —մինչև հիմա ես ալ կ'կար-
ծէի, որ անտարակոյս բռնես պիտի պարզած ձեռքս. Ի՞նչ
լուրջ վարանում կընայ գոյութիւն ունենալ սիրող կնոջ մը
համար իր սիրած տղուն ու արւեստի մը մէջ: Բայց հիմա . . .
հիմա ալ պարզ է ինծի, քու աէր ըսածդ զգացումներու
խաղ մըն է միայն, ժամանց մը գուցէ, գուն չես կընար
սիրեր, յափշտակւելու, բռնկւելու ու ծօնւելու կանացիու-
թիւնը նւաղեր, մարեր է սրտիդ մէջ՝ աւելի ոյժ ու դի-
մացկութիւն տալու համար քու արւեստի ձգտումներուդ,

կինը հալեր է քու մէջդ ու այդ հալւածքէն ձուլւեր է դե-
րասանուհին . . .» (եր. 84):

Յափշտակւելու, բռնկւելու և ծօնւելու մասին ով որ
էլ խօսելու լինի, դասալիքը պիտի լոկ ձկան պէս: Դար-
ձեալ կրկնենք. մի բնագդտ մարդ, սեռական ընտրութեան
թէօրիան սերտած մի պրիւատ դօցենտ անկարող է զոհել
իւր նախապաշտմունքը՝ վախենում է տեսնել իւր կնոջը
շրջապատւած յարգողներով, բայց այդ նոյն մարդը թեթև
սրտով սիրուհուց պահանջում է խաչ դնել իւր հոգեկան
կեանքի և պաղպայի վրայ. և այդ եղեռնագործութիւնը
պիտի կատարւի յանուն սիրոյ! Աղջկը չի համաձայնում.
և տղան բռնում է փախուստի ճամբան իւր հոգեկիցների
նման . . .

5.

«Դուրսեցիների» հերոս Բագրատին Շանթը տւել է
աւելի ազնիւ կերպարանք: Նա անձնուրաց է հանրական
գործի մէջ և թւում է թէ այդօրինակ հոգեկան առանձ-
նայտակութիւն ունենալով՝ սիրոյ մէջ նա պիտի կատարէր
մեծագործութեան թոփչքներ՝ ներքնապէս խորթ մնալով
դասալիքութեան գաղափարին և դործին:

«Նա ուսուցիչ է, նւիրուած մարդ: Զի խնայում ոչ ֆի-
զիքական և ոչ հոգեկան էներգիան մանուկ սերնդի յառա-
ջազիմութեան համար: Նա կամենում էր իւր սաների ան-
մեղ և մոմէ սրտերը լաւապէս կերտել, որ նրանցից ապա-
գայում գուրս գան կատարելատիպ դէմքեր, ինչպէս ինքն
է ասում՝ «մարդ, անհատական մարդ, ամուր մարդ. որոշ
ձգտումներով, կեանքը վայելելու և ուրիշներին վայելցնել
տալու տենչանքովը բռնկւած . . .» (եր. 17):

Կամքի ոյժի, ամրութեան և վայելչասիրութեան հետ
միասին Բագրատի իդէան է կազմում նաև ձեռներէցու-
թիւնը, յանդգնութիւնը: Երերուն, վախկոտ, կասկածոտ
ու անվատան մարդուն նա ատել միայն կարող է: «Քանի
ըստակ կընէ երիտասարդը առանց ձեռներէցութեան, յան-
դգնութեան, —ասում է նա. —հովին դողացող, անվատան,

կասկածոտ. թնւ, ատոնք ալ մմրդ են, խրտելակ» (Եր. 48):

Բագրատի իդէալն այն տեսակ մարդն է, որ իւր բոլոր ոյժերը նւիրաբերում է որ և է գործի կամ գաղափարի և զրա մէջ հաճոյք է գտնում: Գործը կամ գաղափարը մի բերդ է, որ պիտի գրաււի: Յարձակվիր, ոյժերդ լարիր և աշխատիր քոնը դարձնել ցանկալին: Գուցէ այդ կռւի մէջ դու խորտակւիս, փոյթ չէ. ոգեորութեան մի վայրկեանում մեռնելը—ամենամեծ երջանկութիւնն է: «Ամեն մարդ իւր հաճոյքին. ուրիշ ոչինչ,—ասում է Բագրատը,—իսկ եթէ այդ հաճոյքը իմ ոյժերս կը սպառէ՝ ատոր պէտք չէ որ զարմանաս. բնութեան մէջ հաճոյք ու սպառում միշտ ձեռք ձեռքի են. յիշէ օրինակ սէրը . . .» (Եր. 106):

Սիրոյ մէջ ևս նա իդէալական տարրեր է դնում: Հանդիպած աղջկայ գիրկը նետւիր դեռ սէր չէ: Հարկաւոր է հակումների, զգացումների բնական ներդաշնակութիւն, մտքի ու բնաւորութեան փոխադարձ կապակցութիւն: Ոյդ բարձր պահանջներն ունենալով հանդերձ՝ Բագրատին խորթ չէ ոչինչ մարդկային կրքեր կնոջ հանդէպ: «Դրացի պատուհանէ մը երեցած մերկ կանացի թև մը իրեն ցնցումներ կուտար. իր քովէն անցնող աղջկան մը երկար հիւսքը մագնիսի պէս նետը կը տանէր իր հայեացքը. թատրոնը իր թերին կից՝ անհանգիստ շնչող կնոջական կուրծք մը տարօրինակ խոռվութիւն մը կը պատճառէր իր հոգիին . . .» (Եր. 75):

Հոգեկան այդ օրինակ մի կազմ և համոզումների այդպիսի մի իդէալական շարք ունեցող Բագրատը սիրահարում է: Նրա սիրոյ պատմութիւնը բաղկացած էր երկու շրջանից: Նա աստիճանաբար սիրահարում է երկու աղջիկների վրայ. Ելէնիի և Լուիզի: Առաջինի մէջ կիրք է փնտրում, իւր կրքին բաւականութիւն է տալիս, կշտանում և ապա թողնում աղջկան: Սիրոյ այդ շրջանը զուտ մարմնապաշտական է, Բագրատի ասելով «մսի երգի» աղջեցութեան տակ կատարած զրգումունք, արհեստական գրգռում: Նա երջանկութիւնը որոնել էր կնո-

շական կուրծքն իւր թերի մէջ ունենալու հաճոյքի մէջ, աղջկային զոյգ շրթունքներին հպել էր մեղւի պէս, ծծել, ծծել և, վերջապէս, յագուրդ ստացել «իգային եսից» . . .

Դա սէր չէ, ասում է Բագրատը: Համաձայնենք նրա հետ: Այժմ Բագրատին գրաւում է Լուիզը, երաժշտութեան մի մատաղատի ուսուցչուհի, որի մէջ ներդաշնակօրէն միացած են գեղանի մարմինը վսեմ հոգու հետ: Բագրատն էլ հէնց այդպիսի մի աղջկայ էր ման գալիս, նրա որոնումները յաջող ելք են ստանում և նա թւում է թէ հասել է իւր նպատակին:

Բագրատի և Լուիզի սէրը փոխադարձ է: Աղջիկը շատ լաւ կարծիք ունի տղայի մասին: Նրան զուր է գալիս թէ Բագրատի մարմինը և թէ հոգին: Աղջկայ վրայ աղջեցութիւն ունէին թէ տղայի արտաքին կազմը, նրա զւարթ լրջութիւնը, ոգեորութիւնը, մտաւոր բարձրութիւնն ու եռանդը: Աղջիկը հաճոյք է զգում նրա ներկայութիւնից: Երբ Բագրատի ներկայութեամբ դաշնակի վրայ նւազում էր, ինքն էլ զգում էր, որ իւր զգարնւածքը կարծես տարբեր շեշտ մը կառնէր»:

Փոխադարձաբար Բագրատն էլ լաւ կարծիք ունի Լուիզի մասին: Վերջնիս հետ խօսակցիլը անհուն հաճոյք է պատճառում իրեն, սիրու թեթևացնում է, մարմին հպումից անուշ գող է զգում, ժպտից ոգեորում է: Ուրախ է այն գաղափարով, որ աղջիկն իրեն սիրում է և այդ սէրը երկուստեք է, փոխադարձ:

Թւում է, թէ ամեն բան կարգին է և պէտք է Բագրատի ու Լուիզի սէրը իրականանայ՝ երկուսին ևս անհուն երջանկութիւն պարգեելով: Սակայն այդպէս չի լինում, որովհետեւ Բագրատն էլ նման է միւս գասալիքներին: Մեր հերոսն ուզում է Պոլսից գաւառ անցնել և գործել գաւառում: Աղջիկը՝ վստահ Բագրատի սիրուն՝ առաջարկում է «ինձի ալ հետզ տար»: Հէնց այս առաջարկից էլ սկսում է մեր դասալիքի հոգին մերկանալ իւր ամբողջ էութեամբ: Նա սկսում է հազար ու մի պատրւակներ մէջ բերել աղջկանից ազատւելու համար: Բայց վերջ ի վերջոյ ինքն էլ

ամօթ է պգում իւր բոլոր պատճառաբանութիւնների հանդէպ և սկսում ամաչել՝ աղջկայ անկեղծութիւնն ու աղնւութիւնը տեսնելով։ Մինչև այժմ Բագրատը սիրում էր աղջկան և ինքն իւր մէջ խոստովանում էր այդ սէրը, բայց որ գալիս է վճռական բոպէն, հէնց որ հասնում է ժամը մի դրական քայլ անելու և բոլոր իւր երազներն ու իդէալներն իրականացնելու—Բագրատը սկսում է կասկածել իւր սիրոյ ոյժի նկատմամբ, այլ ևս վստահ չէ իւր զգացման խորութեան վրայ, իւր սիրոյ հզօրութեան վրայ . . . Եւ նա լքում է աղջկան, բռնելով բոլոր դասալիքներին յատուկ փախուստի ճամբան՝ չամաչելով մի վերջին անդամ ևս իրեն անձնուրաց ձևացնելով. «Քեզի համար ամեն բան ընելու պատրաստ եմ եղած»—ասում է Բագրատը աղջկան և յետ մզում այդ նոյն աղջկայ պարզած ձեռքը՝ դասալիքի անպատկառութեամբ և սնամէջ պատճառաբանութիւններով . . .

Բագրատի զգացումները բթացած չեն, նա նուրբ կերպով ըմբռնել գիտէ։ Եւ երբ լուիզը գալիս է նրան ճանապարհ ձգելու և վերջին մնաս բարեն ասելու, Բագրատը նրա հանդէպ իրեն յանցաւոր է համարում և նրան մօտենում է յանցաւորի պէս փախով ու դողով . . .

Եւ դա բնական է. նա, վերջապէս, գիտակցում է, որ փշրում է մի կենսունակ սիրտ, որ բարախում է իրեն համար . . ., սիրոյ համար, որի անձնուրաց մի քայլ անելու անընդունակ է դասալիքի եսանւէր հոգին . . .

III.

Շանթի հերոսուհիները բոլորովին այլ հոգեկան գծերով են հանդէս դալիս։ Մի զարմանալի հետևողականութեամբ նրանց ներքին աշխարհին խորթ է դասալքութիւնը թէ իբրև դադախար և թէ իբրև գործ։ Մինչդեռ Շանթի դասալիքները երկառաւակւած հոգի ունեն, նրանց մտքի և սրտի միջև չկայ ներդաշնակութիւն ու ամբողջականութիւն, — ընդհակառակը Շանթի կանայք ամբողջական հոգի ունեն, նրանց մտաւորի և զգացմունքի միջև անհաշտութիւն չկայ։

Մինչդեռ մեր գեղագէտի հերոսները անրջում ու երագում են, բայց կամքի ոյժ չեն ցոյց տալիս իրենց անրջածն ու երազածն իրագործելու, —ընդհակառակը, կանայք գործնական են, նրանց մէջ երազնը չերազն ու իրականը չեն անջրպետած, տոկունութիւն և կամք է նրանց տրւած մի բան կամենալու և այդ կամեցածը մարմնացնելու գործի մէջ։ Մինչդեռ Շանթի տղամարդկան գուրկ են նախաձեռնութիւնից, յանդզնութիւնն ու խիզախութիւնը նրանց մօտ երազելի գրութիւններ են և անիրազործելի հնարաւորութիւններ, —ընդհակառակը, կանայք ձեռներէց ոգի ունին և հետապնդում են իրանց նպատակին անվախ վճռականութեամբ։ Մինչդեռ հերոսների համար ապագան միշտ երկեղներ ծնող մի անօրոշութիւն է, որին մօտենում են նրանք զողով ու սարսափով, —ընդհակառակը, հերոսուհիների համար ապագան միշտ ժպտուն է, որովհետեւ նրանց մէջ կայ հաւատ գէպի իրենց կամքի անյողդողդ բնոյթը։ Մինչդեռ անձնուրացութիւնը մի անմատչելի իդէալ է Շանթի տղամարդկանց համար, չնայած որ նրանք իրենց միշտ էլ անձնազոհ են ցոյց տալիս կամ երազում են անձնուրաց լինել, բայց այդպէս չեն իրօք, —ընդհակառակը, մեր գեղագէտի կանանց համար անձնուրացութիւնը նրանց ներքին տարերն է, որով նրանք ապրում են և շնչում։ Մինչդեռ Շանթի բոլոր հերոսները սիրահարւում են, բայց սէրը նրանց չի համակում ամբողջապէս և գիտակցութեան հետ պայքարի մէջ է մտնում, սիրոյ զգացումը նրանց արութեան գործեր կատարել չի տալիս և նրանք վստահօրէն լքում են իրանց սիրածին, մոռանում են անցեալը, —ընդհակառակը, Շանթի բոլոր հերոսուհիները սիրահարւում են և սիրոյ զգացումով համակում ամբողջապէս, նրանց մօտ չկայ ներքին երկառաւակութիւն սիրոյ և բանականութեան միջև, սիրոյ զգացումը մղում է նրանց գէպի արութեան գործերի ասպարէզը և նրանք տեսականորէն ապրել գիտեն մի անգամ իրենց մէջ հաստատած զգացումը։ Մի խօսքով Շանթի հերոսները դասալիքներ են, իսկ հերոսուհիները անձնուրացներ, անձնուրացու-

թիւնը խորթ չէ սրանց, որովհետև սիրել գիտեն:

Ի՞նչով պիտի բացատրել այդ հակաղութիւնը: Շանթի կանանց մօտ սեռի բնազրը մի տարերային ոյժ է, որ իրեն ենթարկում է հերոսուհու ամբողջ հոգին: Նրանց մօտ յոյզերի աշխարհը չափազանցօքէն զարգացած է, իսկ սէրը մեծագոյն յոյզն է, որ նրանց մղում է անձնուրաց քայլերի, կամք ու վճռականութիւն է պարզեցում: Յոյզերն իշխում են բանականութեան վրայ, որովհետև սեռը հզօր է նրանց մօտ, քան ինտելեկտուէլ աշխարհը: Շանթի կանայք ճառել չ'գիտեն, նրանք փիլիսոփայութիւններ չեն անում, իրենց մտաւորապէս զարգացած չեն ցոյց տալիս: Այդ կանայք միայն զգալ գիտեն և ապրել, ուզում են վայելել կեանքը և ուրիշն վայելցնել: Այսինքն նրանք ունին ճիշտ այնպիսի յատկութիւններ, որոնցով զուրկ են Շանթի հեռասները և զարմանալի չէ, որ վերջիններս նրանց վրայ սիրահարում են, բայց ապարդին կերպով . . .

Այժմ տեսնենք Շանթի այդ հերոսուհիներին, որոնց տիպական ներկայացուցիչներն են՝ Մինէ և Վերժին, առաջնը «Դերասանուհի» վէպի հերոսուհին, իսկ երկրորդը՝ համանուն վէպի:

1.

Մինէն տարւող բնաւորութիւն ունի: Նա մի բան կ'սիրի և այդ սիրոյ մէջ կ'դնի ներշնչում և անկեղծութիւն: Նա գերասանուհի է, բայց գերասանութիւնը նրա համար արհետ չէ, այլ արւետ, որ ճնում է ոգեսրութիւն և խանդավառութիւն: Երբնա խօսում է իւր արւետի մասին, ամբողջապէս վերանում է և յափշտակում: Ի՞նչ յատկութիւններ են գրաւում նրան բեմական արւետի մէջ: — Ազգել, ներշնչել, տիրել: «Ուրիշները իր հոգեկան ոյժին, իր ստեղծագործութեանը ենթարկելու մէջն է գեղարւետագէտի էական հաճոյքը, — ասում է Մինէն, — և այդ իր ոյժի գիտակցութենէն բղխող հպարտութիւնն ալ իր գովասանքն է ու փառքը, որ բնաւ կարիք չունի դուրսէն մուրալու» (եր. 15):

Մինէի մէջ արւեստաւորը և մարդը մի ամբողջութիւն են ներկայացնում: Նա կեանքի մէջ էլ արտիստունի է, ինչպէս որ բեմի վրայ: Կեանքի մէջ լաւագոյն հաճոյքը նա գտնում է մի ուրիշի հոգու մէջ ամուր տեղ զրաւելու ճիգերի մէջ: Մէկի ներքին աշխարհում մի պայծառ անկիւն զրաւել, դառնալ նրա մտորումների առարկան և մղիչ հանդիսանալ նրա կեանքին ու գործին, ողեորել և ներշնչել—ահա ամեն մի մարդու իդէալը: Այդ իդէալը Մինէի համար մի տարերք է, որով նա շնչում ու ապրում է և առանց որի՝ նա կ'լինէր մի մարմին, որից հանել են կենդանարար շունչը:

Նա թէ ոյժ ունի և թէ կամք իւր ներքին հակումներն իրագործելու համար:

Դերասանութիւնը մի ստոր պաշտօն է համարւում մեր միջավայրի մէջ: Դերասանութիւնի լինել, նշանակում է ամենքի ծաղը ու ծանակի առարկայ դառնալ: Ամենքը, թէ տանը և թէ դուրսը, խօրհուրդ են տալիս Մինէին թողնել բեմը, մանաւանդ որ նա որոշ չափով ապահով է անտեսապէս, և անձնական երջանկութեան ուղին ընտրել: Մինէն ամեն կողմից պաշարւած է: Մինուրբ և զգայուն հոգի, գէպի լաւը տրամադիր և վատից խուսափող,— Մինէն չէր կարող անտարբեր լինել գէպի այդ օրինակ շշուկներն ու ակնարկները: Նա կին է, գերազանցօքէն կին և ոչինչ կնոջական խորթ չէ նրա հոգուն: Նա կանացիական թովչանքների մի մարմնացումն է և ի գէպս հարկին կարողանում է այնպէս գեղեցկօքէն գործադրել այդ թովչանքները:

Եւ ահա Մինէն այդօրինակ հոգի ունենալով՝ սիրահարւում է Հրանտի վրայ: Վերջինս նրա առաջ զնում է մի կարուկ հարց, — Թողնել բեմը, ուրիշ խօսքով՝ դառնալ դասալիք իւր կոչման նկատմամբ: Մինէի համար սկսւում են դժոխային տանջանքների օրերը: Երկու սէր, հաւասարապէս ուժեղ երկու զգացումներ ելնում են պայքարի և այդ պայքարի մրցագաշտը Մինէի քնքոյշ հոգին է. «Է՛, դուք ի՞նչ գիտեք այդ անտառնելի չարչարանքը, — ասում է Մինէն՝ պատկերացնելով իւր հոգեվիճակը, — մարդ կրնայ

խելագարիլ, իսկ հասկըցող ոչ ոք. ոչ ոք դիմացինի հոգին ըմբռնել չուզեր. սակայն այդ վայրենի, ամարդի, անխլիճ բան է՝ բոնել մէկը ու շիտակ դժոխքին մէջը նետել. դժոխքի, դժոխքի . . .» (Եր. 91):

Վ Դասալիք Հրանտը անձնազոհութեան դասեր է կարդում Մինէի առաջ: Պիտի զոհես արւեստդ, որովհետեւ սիրում ես ինձ, ասում է Հրանտը: Կնոջ համար անձնազոհութիւնը ամենաբարձր առաքինութիւնն է: Մինէն դասալիքի այդ սովեստութեանը պատասխանում է հետևեալ կերպով. Անձնազոհութիւն. ի հարկէ ձեր հաշւին կուզայ, որ կինը շարունակ մինակ ձեր գլխուն շուրջը դառնայ, միայն ձեր մասին մտածէ, զոհէ ձեզի համար ամեն բան. և ազատութիւն, և շարժում, և զբաղում, և կեանք: Իսկ դժուք. ա, դուք տէրերն էք, ի հարկէ. դուք միայն պիտի պահանջէք. ու այդ բռնակալի կոպիտ պահանջին անունը դրեր էք կանագիութեան դագաթնակէտ, կնոջ մը ամենամեծ առաքինութիւնը. ինչպէս չէ» (Եր. 72):

Մինէն լաւ կարծիք ունի Հրանտի մասին, հակառակ դէպօւմ նրան չէր էլ սիրի, ուստի և իւր ամբողջ զայրոյթն ու կշտամբանքն արտայայտում է ոչ թէ անձնապէս Հրանտի դէմ, այլ այն «առնական կոպիտ, անգութ, անխնայ եսի» դէմ (Եր. 97), որ խօսում է Հրանտի բերանով: Միրող կնոջ միամտութեամբ մինչև անդամ իւր սիրածի պահանջկոտութեան մէջ մի առանձին հրապոյր, ձգողութիւն է տեսնում: Մինէն զգայախաբութեան մէջ է դանւում. նա ամենին չի կասկածում Հրանտի անկեղծութեան վրայ և չի տեսնում նրա մէջ երկչու և պատրւակներ որոնող դասալիքին:

Մինէն թովում է հէնց այն պատճառով, որ նա դադարական մի սխեմա չէ, իդէալի շինծու մի անօթ չէ, այլ կին է, սիրող, տանջող և սեռականօրէն ապրելու բուռն ձգառում ունեցող մի արարած: Շատ գեղեցիկ են նրա սիրոյ սկիզբը, ընթացքն ու վախճանը: Նա ելնում է իւր սիրոյ ասպարէզը սիրուն ակնկալութիւններով, նա պարզեցում է իւր սիրածին թովիչ բոպէներ, նա տալիս է

նրան իւր կանացիական հմայքի բոլոր քաղցրութիւնները, նա զերում է և զերւում, պաշտում է և պաշտում: Նա բոլորովին չի մտածում, որ Հրանտն անկարելի, անմտածելի և յիմար պահանջներ պիտի զնի իւր առաջ, պիտի սկսի սիրոյ մի առուտուր: Բայց անկարելին պատահում է և Մինէն կանգնում է մի ծանր երկնարանքի առաջ, կամ կոչումը, կամ սէրը: Դրանցից մէկը պէտք է զոհել՝ միւսին հասնելու համար: Մինէի հոգում սկսում է հոգեկան դրամա: Հրանտը, բոլոր դասալիքներին յատուկ հոգու դաժանութեամբ, սկսում է մի խորամանկ գործելակերպ. ամեն բոպէ շեշտում է, որ կինը, կանացիականը մեռել է Մինէի մէջ և նա լոկ ամեն ինչ կեղծող, խաղի սիրուն խաղ սկսող մի գերասանուհի է: Դա մի սոսկալի սուս է, որովհետեւ այդ նոյն Հրանտը բազմաթիւ փաստեր ունի, որ Մինէն արւեստաւոր է և մարդ միանգամայն, նրա մէջ կինը չի մեռած: Հակառակ դէպօւմ հոգեկան դրամա էլ չէր կատարի: Նա գիւրութեամբ կ'զոհէր կամ արւեստը, կամ սէրը: Բայց որովհետեւ երկուն էլ հաւասարապէս ուժեղ են նրա մէջ, ուստի և հնարաւոր է դառնում հոգեկան մի ծանր վիճակի հանդէս գալը, որ տանջում է Մինէի քնքոյշ կնոջական հոգին:

Այդ հոգեկան դրամայի ընթացքում Մինէն ունենում է անկումի և վերելքի վայրկեաններ: Սկզբնապէս սեռականօրէն ապրելու ձգառումը խիզախօրէն է խօսում նրա մէջ և նա բռնում է անձնատուր լինելու ճամբան. «Ինչ կարիք կայ քաշքաւելու, — ասում է նա Հրանտին, — դէ, զիտցիր, զիշերները երբեմն ամբողջ ժամերով քու համբոյրդ եմ անրջած միայն. ալ հերիք է որչափ ինքս իմ հակումներս կոտրել ջանացի. ալ չեմ ուզեր դիմադրեր. ոչ. այլոգնեցայ. և ինչու, որու համար: Հրանտ, առ, քաշէ, տար ինծի ուր որ կուզես, ըրէ ինծի հետ, ինչ որ կուզես. ես տպրիլ կուզեմ. ես կուզեմ սիրւիմ. սիրւիմ քու ամբողջ սրապդ, երիտասարդի քու բոլոր կրքերովդ: Առ, քաշէ, տար ինծի, քու սիրուհիդ, քու ստրուկդ, քու կիսդ . . .» (Եր. 124):

Սէրը յոյզ է, բայց ներշնչումն էլ յոյզ է, անգիտակ-

յական աշխարհի խորքերում է թաղւած նրա արմատը: Ժամանակով ներշնչումը աւելի հին և հիմնաւոր մի երեսյթ է Մինէի հոգեկան աշխարհում, քան սէրը: Նրա հոգու բնախօսութիւնն ու նրա բնաւորութիւնը թափանցւած են իւր ներշնչումով, նա այդ ներշնչման կամակատար գործիքն է և չի կարող նրա դէմ ըմբոստանալ: Իւր ներշնչումը չէր կարող Մինէն սիրոյ առևտուրի գոհ դարձնել: Եւ այդ է պատճառը, որ վերի անկումից կամ անձնատուր լինելուց յետոյ նրա գլխի մէջ մեխւում է մի սեեռեալ գաղափար.—«Ծախեցի, արւեստս ծախեցի», որ ատամների միջից ծւալով ասում է նա (եր. 132): Բնազդաբար նրա հոգու մէջ ճշմարտութիւնը յաղթանակ է տանում սուս սիրոյ դէմ...»

Մինէն որոշում է դասալիք չ'դառնալ իւր կոչման հանդէպ: Նա լարում է իւր հզօր կամեցողութեան ամբողջ եռանդը և յաղթանակում: Վերջ ի վերջոյ նա համոզւում է, որ իւր սէրը չի կարսղ դառնալ երջանկութեան աղբիւր, որովհետև նրա հիմքը դրում է ոճի, եղեռնի վրայ, մի ոճիր և եղեռն ընդգէմ աստւածայնութեան, որի արտայայտիչն է տաղանդը, ներշնչումը: Նա չի ուզում վարկարեկել իւր սէրը, աղարտել իւր զգացումը՝ Հրանտին յափշտակիչ կամ ընդունակութիւններ բնաբարող համարելով: «Ես կ'ընտրեմ քեզմէ հեռաւ, միշտ հեռաւ, բայց սիրաքեզմով լեցուն, ու մաքերս էլ յափշտակւած դէպի քեզի...» (եր. 143):

Մինէի այդ խօսքերն հաւատ են ներշնչում, մենք վստահ ենք, որ նա տէր կ'մնայ իւր խոստումին, որովհետև մի անգամ ցայտուն կերով ապացուցեց, որ ինքն չունի դասալիքի հոգի: և սէր ու գաղափար նրա մէջ մի անգամ մտնում են՝ այլ ևս այնտեղից չելնելու հաստատութեամբ...

2.

Դասալիքները սիրում են Շանթի կանանց, որովհետև նրանց մէջ գանում են այնպիսի յատկութիւններ, որ բացակայում են իրենց հոգում: Դա բնական մի բան է. մարդ

ուզում է սիրոյ միջոցով ինքն իրեն լրացնել, իւր հոգեկան կեանքն աւելի ըովանդակալից գարձնել և նրա մէջ եղած պակամն ու թերին վատարել: Շանթի դասալիքները կամքի ոյժից զուրկ են, նրանք համակերպող հոգի ունեն, նրանց մէջ չկայ հովարտութիւն, դէպի ինքը: Մինչդեռ Շանթի կանայք հենց այդ յատկութիւններով են փայլում և մագնիսի պէս ձգում անկամ, համակերպող և պատւագուրկ դասալիքներին:

Վերժինը Շանթի երկրորդ հերոսուհին է, նրա դասալիքներից մէկի՝ Արշակի սիրուհին: Մէկ օր վերջինս զարմանքով նկատում է Վերժինի հասցէին. «Մեր սին ու անտարբեր ընտանեկան կեանքին մէջ այս դժգոհութեան ու բողոքի ծաղիկը ռւրկէ է բուսեր» (եր. 25):

Բայց բողոքեն ու դժգոհելը դեռ բաւական չէ, հարկաւոր է ոյժ և տոկունութիւն ունենալ կամեցածն իրագործելու համար: Արշակը պարզ ի պարզոյ տեսնում է թէ պործ ոյժը և թէ այդ տոկունութիւնը և ինքն իւր խոստովանում է. «Ոյժ ունի, ոյժ. հիանալի աղջիկ է» (եր. 36):

Սակայն Արշակին առաւելապէս գրաւում է Վերժինի ինքնուրոյնութիւնը, այն՝ որ Վերժինը ուրիշների պէս չէ, շաբլոնական հոգի չունի, ունի իւր ուրոյն մտածումները, համոզումները, անուրջներներն ու ձգտումները, որոնց անունով և որոնց համեմատ գործել գիտէ նոյն իսկ հակառակ իւր շրջապատի, իւր ընտանիքի դրած արգելքներին (եր. 65):

Այսօրինակ հոգեկան կազմ ունեցող կնոջ սէրը պարզ է թէ ի՞նչ պիտի լինի: Երբ մենք գծագրում ենք դասալիքների հոգեկան աշխարհը, մեր մէջ արդէն մսնում է լիքների կամերածը թէ այստեսակ մի մարդ չի կարող բոլորայն կասկածը թէ այստեսակ մի մարդ չի կարող բոլորանւէր կերպով որդեգրւել որ ևէ գաղափարի կամ զգացմունքի: Եւ ընդհակառակը, երբ մեր մէջ առաջանում է այն հաւատը, թէ նա ընդունակ է և սիրելու, և նվիրելու անձնուրացութեամբ:

Վերժինը սիրում է Արշակին: Եւ երբ նա իւր ամենա մօտիկ ընկերուհու մօտ սիրոյ խոստովանութիւն է անում,

բաց է անում իւր գաղտնիքը, նրա ամբողջ ներքին աշխարհը յուզում է. «Վերժինի թևերը թուցան ու ինքը բոլորովին սահեցաւ գետին: Ծունկերը գետինը փռւած մորթիին թաւ մազերուն մէջ, կուրծքը ընկերունիին ծունկերուն վրայ, և թևերն ալ թոյլ կերպով մը անոր մէջքը նետած» (Եր. 97):

Սիրոյ այդ ամենապարփակ զգացումի անօթ լինելով՝ վերժինը Շանթի միւս կանանց նման նախաձեռնող ընտուրութիւն ունի: Եւ մինչդեռ Արշակը տատանւում է և անկարող է վճռական մի քայլ անել, վերժինը կարտերը բաց է անում և ճշմարտութեան երեսն ի վեր նայում անվախ հաստատամտութեամբ. «Ներեցէք ինծի, — ասում է վերժինը Արշակին, — ես կողմնակի ճամբաներով վարժւած չեմ, ես չեմ կրնար զսպեր, ինչ որ սրտիս վրայ ծանրացած է: Զեր վերադարձէն ի վեր, զիտէք, որ ես ամեն վայրկեան ձեզի եմ սպասած, ամեն դուռը զարնւելուն ցատկեր եմ տեղէս կարծելով որ դուք էք ըլլալու . . .» (Եր. 128):

Սիրոյ այդ համակիչ զգացումին չի կարողանում դիմադրել Արշակը և ինքն իւր կողմից սէր է խոստովանում վերժինին: Բայց դասալիքի այսօրւան խոստումը՝ վաղւան մերժում է նշանակում: Եւ այդ մերժումն անում է Արշակը: Աղջկայ համար դա մի անակնկալ բան էր, ոչնչով նա չէր նախալատրաստած այդպիսի մի հարւած ստանալու համար: Դեռ երէկ Արշակը նրան իւր գիրկն էր առել և համբոյրներ էր տեղում նրա երեսին, շրթունքներին: Ի՞նչ պատահեց: Ահա այն նստարանը, որի վրայ նրանք նստած էին. «Մութին գիրկէն նստարանը հազիւ կը նշմարւէր. քայլ մը հեռու կեցաւ (վերժին), արձանի մը պէս անշարժ, ձեռքերը ծալլած կրծքին, ու հայեացը յամառ կէտի մը յառած. մինչ թարմ պատկերներ յիշողութեան ծոցէն դուրս կ'լողային, կենդանի ու գունաւոր. զգաց որ կուրծքը նուրէն դողալ սկսու, հեշտանքի ու ցաւի գիրկնդիմառն դողով. մէյ մըն ալ յանկարծ ցնցւեցաւ, երազէ արթընցածի մը պէս, յուսահատ ու վայրի շարժումով մը իր վրան

խուժող թարմ ու վառ յուշերը ձեռքովը մեկդի հրել ուզեց, և տեսակ մը վախով դուրս վախաւ աւազանին մօտէն» (Եր. 145):

Այդքան ուժեղ հիմք է դրել սէրը վերժինի հոգում: Բայց ընաւորութեանց ինչ հակադրութիւն, Արշակը այսպէս թէ այնպէս մերժել է աղջկայ սէրը, բայց նրա հոգին հանգիստ չէ, ինքն իրեն յօշուում է, մեղադրում ու պարսաւում, ապա արդարացնում ու խրախուսում իւր քայլը. մինչդեռ վերժինը մերժում ստանալով՝ չի ստորացնում ինքն իրեն, ինչպէս Արշակը. նա կամքի ոյժ է ցոյց տալիս, սիրելով հանդերձ՝ նա չի վարկաբեկում ինքն իրեն, իւր գգացմունքի վեհութիւնը: Եւ երբ Արշակը դալիս է նրա մօտ բացարութեան, վերժինը թոյլ չի տալիս նրան խօսել, մերժում է ոչինչ լսել: Եւ այդ բոլորը նա անում է սիրելով հանդերձ, նկատի առէք: Կամքի ինչ գերմարդկային ձիգ է հարկաւոր մի այդպիսի սառնասրտութեան համար!

Բայց վերժինը կին է և ոչինչ կոոջական խորթ չէ նրա հոգուն: Երբ նա բաժանւում է Արշակից, տալով նրան հրաժեշտի վերջին բարեկը՝ «հազիւ դուռը գոցւեցաւ, որ աղջիկը գայթելով գնաց ետ-ետ, շունչը կտրեցաւ, ձեռքերը բարձրացան վեր, ուսը դէմ առաւ պատին, ինկան ձեռքերը դէմքին և այրող արցունքը կատաղի հեծկլառւքով դուրս հեղեղւեցաւ» (Եր. 166):

Այսպէս են սիրում Շանթի հերոսունիները . . .

IV.

Սինչև այժմ մեզ համար համոզիչ կերպով պարզեց, որ Շանթի մօտ գեղարւեստօրէն գեղեցիկ է դուրս դալիս դասալիք մարդու հոգին: Բայց Շանթը չի բաւականացել իւր ձիրքի այդ բնական առանձնայատկութեամբ և իւր երկու գրամաների («Եսի մարդը» և «Ճամբուն վրայ») նիւթ է դարձրել ոչ-դասալիք մարդկանց:

Երբ գեղագէտը դուրս է դալիս իւր գեղեցկի սահմա-

նից, նա դառնում է շինծու և անհամողիչ, և բնական է, որ նա այլ ես մեզ չի համակում իւր պատկերների ոչ գեղարւեստական և ոչ կենսական ճշմարտութեամբ: Հոգ գերանական գիտութիւնը նահատակւում է, իսկ կենսական ճշմարտութիւնը գտնում է արտայայտութիւն ոչ թէ հարազատ պատկերների մէջ, այլ դառնում է քարոզ և շատախօսութիւն, որ միայն ձանձրոյթ կարող է ծնել և յօրանշի ջղաձգութիւն առաջ բերել:

Մենք երկար կանգ չենք առնի այդ դրամաների վրայ: Բաւականանանք մատնացոյց անելով թէ մէկ և թէ միւս դրամայի հերոսների անբնական, շինծու և սարքովի բնոյթի վրայ:

«Եսի մարդը» դրամայի հերոսն է մատնիչ Մուշեղը: Հաստատամիտ, համոզմունքի մարդ է դուրս բերւած այդ մատնիչը: Լեռն Շանթը իւր դրամայի վերնագիրը «Եսի մարդ» գնելով՝ կամեցել է հէնց այդ հանգամանքի վրայ շեշտել: Մատնիչ Մուշեղը համոզւած եսասէր է, իւր սեպ-հական շահերից դուրս, իւր անձնական բարեկեցութիւնից բացի՝ նա ուրիշ ոչ մի սրբութիւն չունի և չի էլ ճանաչում: Այդ բոլորը լաւ. հիմա մնում է խօսքը զործ դարձնել և գեղարւեստական պատկերների մէջ մարմացնել հերոսի դիմքը: Հէնց այստեղ է, որ Շանթը ոչինչ անել չի կարողանում և իւրաքանչիւր քայլափոխում ծիծաղ է շարժում թէ իւր անկարողութեամբ և թէ իւր հերոսի շինծու, սարքովի կերպարանքը հանդէս բերելով:

Լեռն Շանթի մատնիչ Մուշեղը մի ափեղցիկեղ շատախօս է, յիմարի մէկը, որ ոչ իւր ասածը գիտէ և ոչ նկատի է առնում այն հանգամանքը, թէ ում առաջ է խօսում: Նրա անտեղի շատախօսութիւնը սազ չի գալիս իւր պաշտօնին. բայց Շանթը որ ևէ կերպ պէտք է նրա մասին տեղեկութիւններ տայ ընթերցողին կամ հանդիսատեսին և իւր հերոսին դարձրել է աւելորդաբան: Գաղտնալահութիւնը սովորաբար մատնիչների մեծագոյն յատկութիւնն է: Մատնիչ Մուշեղի մօտ այդ յատկութիւնը բացակայում է, նա սկսում է երկար ու բարակ իւր գաղտնիքները մեր-

կացնել ինչ-որ «կէս ծեր, ծոյլ ու դանդաղ» մի մարդու առաջ, որ իբր թէ իւր գործակիցն է: Նախ՝ խելքի մօտ բան չէ, որ ահազին Պօլսի մէջ մանտիչ Մուշեղի պէս մի կարեոր մարդու մտերիմը և գործակիցը այդ կիսախարխուլ ծերունին լինի: Երկրորդ՝ եթէ դա ճշմարիտ է, ապա մատնիչը խելքը գլխին մարդ չէ, որ մի այդպիսի մարդու առաջ կարեոր մերկացումներ է անում իւր գործի և պաշտօնի շուրջը: Սովորաբար մատնիչներն այդպիսի մարդկանց գործադրում են իրենց նպատակների համար անկամ գործիքի պէս և ոչ թէ հետները նստում են և արժէքաւոր ու պատասխանատու ծրագիրներ կազմում...

Իբր թէ մատնիչ Մուշեղը համոզմունքի մարդ է և ինչ որ անում է, իւր ներքին աշխարհի խորքից է բղխում: Սակայն այդպէս չէ: Թէև Շանթը կամեցել է նրան այդպէս դուրս բերել, բայց այդ չի յաջողւել: Դրամայի հէնց սկզբում նա հանդէս է գալիս իբրև տատանւող մէկը, որ դեռ պարզապէս չի որոշել իրեն համար, թէ ինքն ինչ է, իւր արած գործը որքան արժէք ունի, ինքն արդեօք մեղաւոր է թէ ոչ: Չնայած այդ բոլոր տատանումներին և ինքնարդարացման ճիգերին, այնուամենայնիւ Մուշեղն իրեն ցոյց է տալիս իբրև հաստատամիտ ոմն, որ զղալ չ'գիտէ, որ առաջադիր նպատակին կարող է անսայթաք կերպով մօտենալ:

Պարզ է ամեն քայլափոխում, որ Շանթը չի սիրում իւր հերոսին և գիտմամբ նրա բերանում յիմար մտքեր է գնում, ցոյց տալու համար թէ որքան հակակըելի գէմք է նա: Մի յեղափոխականի հետ սեղան է նստած Մուշեղը, համ ուտում է, համ խօսում: «Լաւ ուտելն ու լաւ խմելը կը սիրեմ, ինչ մեղքս պահեմ: Ամեն անախորժութիւն նորէն կերպ մը կարելի է տանել, երբ մարդ շնորհքով ուտելիք ունենայ ու այսպէս պատուական խմելիք: Գիտէք, համեղ պատառի մը համար ինչ ոճիրներ կը գործւին» (եր. 19):

Մարդ չի հասկանում թէ այդ բոլորն ինչի համար է: Հակակըանք զարթեցնելու դէպի մատնիչը: Այդպիսի նպա-

տակի չի համնում Շանթը: Եւ մենք համողում ենք, որ
այդ բոլորը միտումաւոր յերիւրումներ են, այդ բոլոր ան-
հաճոյ դատողութիւններն ու անտեղի մերկացումները
միանգամայն անբնական են և սարքովի:

Իւրաքանչիւր բովէ ուզում է ինքն իրեն արդարաց-
նել Մուշեղը, չ'նայած որ՝ ըստ Շանթի, նա շատ ինքնու-
րոյն մարդ է և այդ ինքնուրոյնութիւնը նա արտայայտում
է փքուն խօսքերով. «Ես հասարակութեան կարծիքը հար-
ցնելու սովորութիւն չեմ ունեցել; — ասում է մատնիչը, —
ոչ ալ անոր բարեհաճ թոյլտութիւն ինորելու՝ իմ ըրա-
ծիս ու թողածիս համար: Ես գիտեմ իմ գործս, ու իմ
գատաւորս ես ինքս եմ» (Եր. 31):

Եւ այդ բոլորը գրելու կարիք է զգացել Շանթը, որով-
հետև գրամայի վերնագիրը գրել է «Եսի մարդը», ուրեմն
որ և է կերպ պէտք է այդ յորջորջումն արդարանայ: Հէնց-
այդ հանդամանքն է պատճառը, որ Մուշեղը Շանթի աւելորդ
հարկադրութեամբ ստիպւած է մի անտեղի և միենոյն ժա-
մանակ անհամ ճառ ասել «յաղագս եսասիրութեան» և այն
էլ ում ներկայութեամբ, մի ողորմելի գրագրի, որ ապրում
է մատնիչի սեղանի փշրանքներով և դողում է նրա առաջ:
Մեր ինքնուրոյն մատնիչը ստիպւած է իրեն արդարացնել
և այդ խղճուկի առաջ: Ի՞նչ արամաբանութիւն, ի՞նչ հո-
գեբանութիւն, տէր Աստած: «Բոլորը սուտ է, սուտ, —
ասում է Մուշեղը, — բոլորը շնորհութութիւն է միայն, բո-
լորը քծնանք ու հաշիւ: Մէկ սէր կայ միայն, մէկ, որը
սուտ չէ, որ կեղծ չէ, և որու մասին ամենքը կեղծաւո-
րութեամբ կը լուն. (պինդ կը ծքին զարնելով): Ինքինքին
սէրը, ինքզինքին: Ամեն մարդ միայն ինքզինքն է, որ կախ-
ըէ, կուզէ ըլլայ աղջիկդ, քոյրդ, եղբայրդ, աղգականդ, ի՞նչ
կուզէ ըլլայ: Սուտ է, ուրիշը սիրել չկայ. հասկցար» (Եր.
41):

Խօսք չունինք, գրամայի վերնագրին բաւական համա-
պատասխան է . . .

Եւ գարմանալին այն է, որ դրամայի մէջ այս ու այն
կողմից լաւ կարծիք է լուսում այդ մնամէջ, տափակ ու

մակերեսային մարդու հասցէին: Պարզ երեսում է, որ Շանթը
կարողութիւն չի ունեցել արդարացնել այդ մարդկանց կար-
ծիքն իւր հերոսի մասին և նրան դարձրել է խօսող մե-
քենայ:

Ուսւ գեղագէտ Կուալրինը մի գեղեցիկ պատմւածք
ունի «Արածու-Կանտան Քանիակօն» խորագրով, որում պատ-
կերացնում է մի եապօնական լրտեսի: Առաջարկում ենք
մեր ընթերցողներին համեմատութեան մէջ դնել այդ գըր-
ւածքը Շանթի գրամայի հետ՝ համոզւելու համար թէ որ-
տեղ է վերջանում պօէզեան և նոր է սկսում պրօզան . . .

Մատնիչ Մուշեղը կատարելապէս յիմար է: Մի աղջկայ
յեղափոխական եղբօրը բանտն է ուղարկում և ապա նրա
առաջ կանգնում ու համոզում, որ գայ և իւր կինը դառ-
նայ հասարակութեան կարծիքի հակառակ, բոլորի հակա-
ռակ: Իսկ այդ աղջիկն եկել էր մատնիչի մօտ, որ մի կերպ
իւր եղբօրը աղատել տայ բանտի կապանքներից: Երբ աղ-
ջիկը մերժում է Մուշեղի տիմար առաջարկը, Մուշեղը
բարկանում է և ասում: «Թքեր եմ ձեր վրայ, ձեր ու ձեր
սիրուն վրայ» Եր. 45), էս էլ Մուշեղի սէրը . . . Այդ ամ-
բոլջ պատմութիւնը ոչ մի նախապատրաստութիւն չի ու-
նեցել դրամայի մէջ, մի թոփչքի տպաւորութիւն է գործում
և համբերատար ընթերցողի միայն ծիծաղն է շարժում:

Այժմ անցնենք միւս գրամային «Ճամբուն վրայ»:
Հերոսն է Վահրամը, յեղափոխական է: Այս կեանքն
էլ գեղուն է ճառախօսութեամբ: Առանց տեղ ու ժամա-
նակ, յարմար ու պատեհ վայրկեան հարցնելու նա ճառում
է յաղագս «գաղափարով ոգեորւած և կեանքէն ձեռք վեր
տուած մարդոց»: Եա պատահում է մի աղջկայ հետ, որի
մասին այն կարծիքի է, որ վայելքի ու գւարճութեան
նորուած կին է. մէկ էլ, յանկարծ նրա հայրենասիրական
ճառախօսութեան տենդը բռնում է և սկսում է ըմբոստաց-
ման քարոզներ կարգալ այդ վափկասուն օրիորդի առաջ:
Մէկ էլ յանկարծ (դարձեալ յանկարծ) զլիի է ընկնում, որ
օրիորդի հետ խօսելիքը պէտք է օդի մասին լինէր, ծովի
ու առտւան մասին . . . «Եա ի՞նչ երիտասարդութիւն է, —

բացականչում է մեր յեղափոխականը, — կատղած շան զայրոյթը սրտիդ մէջ, ամբողջ մորթւող ժողովրդի մը մորմոքը կոկորդիդ, ակռաներուդ տակ վրէժը խածած, իսկ շուրջդ հլու, խոնարհ, լքում ու վախ. մարդ չի կայ, առնականութիւն չի կայ, հոգիի շարժում չի կայ, ազատ վերեր ու խոյանք չի կայ . . . Ատիկա մահ է, մահ, ամենասուկալի մահը: Հոգիի մահն է ատիկա: Կծկւեր է մեր մէջ հոգին. ոչ ցանկալ գիտէ, ոչ ձգտում ունի իւր ցանկացածին պէս ապրելու, ոչ կոխւ գիտէ, ոչ դիմադրութիւն, ոչ ալ նոյն իսկ մեռնել գիտէ այդ հոգին» («Գարուն» ալմանախ, գիրք I, եր. 58—59):

Մարդ չի հասկանում թէ այդ բոլոր բառերը ինչու է դուրս տալիս մեր հերոսը մի աղջկայ առաջ, որ միայն ապուշապուշ կրկնումներ է անում նրա բառերին՝ ճիշտ արձագանքի պէս: Մի յեղափոխական մարդ այդպիսի մի ձառ (որի միայն մի մասը մէջ բերինք) ինչու պիտի ասի: Որ և է նպատակով, չէ: Ո՞րն է նպատակը: — Նպատակ չկայ: Շանթի անձնուրաց հերոսները յիմարներ են, ոչ իրենց են ճանաչում, ոչ դիմացինին: Բայց եթէ Վահրամի նպատակն է աղջկան գրաւել և հէնց այդ նպատակով է ճառում, ել ինչու է նա աղջկան յետ մղում, երբ վերջինս ուզում է այդ ճառի աղջեցութեամբ վճռական քայլեր անել, իւր սէրն իրագործել . . . Մարդ բան չի հասկանում:

Սիստեմատիկ կերպով աղջկան գրաւելու համար ճառեր է ասում՝ միշտ համոզւած որ նա, այդ աղջիկը երբէք իրենը չ'պէտք է լինի, որ ինքը կորած մարդ է և իրաւունք չունի դէպի կորուստ տանել մի անմեղ և քնքոյշ հոգու: Բայց չէ, Շանթը կամեցել է անսպայման գրամաստեղծել, կամեցել է ցոյց տալ, որ իւր հերոսը վճռական և կամքի ոյժի տէր մարդ է, որ նա կարող է անձնական վայելչութիւնը զոհել գաղափարական գործին: Այդ բոլորը ոչ համոզիչ է, ոչ գեղարւեստական: Աւելի ճիգ կայ, քան ստեղծագործութիւն: Թէ Մարին (յեղափոխականի սիրուհին) և թէ Վահրամը շինծու են ոտից գլուխ: Նրանց բոլոր արարքները յանկարծական բռնկումների արդիւնք են:

ոչ մի գեղարւեստական պատճառաբանութիւն և նախապատրաստութիւն չկայ նրանց խօսքի և գործի մէջ: Մանաւանդ աղջիկը Շանթի կանանց նման չէ, պատահողի հետ փիլիսոփայութիւններ է անում, խելքին զօռ է տալիս և երազող է վերին աստիճանի, գծեր, որ չկան Շանթի կանանց մօտ: Իսկ Վահրամի կամքի ոյժն ու համարձակութիւնը դարձեալ նորութիւն է Շանթի հերոսների համար՝ մանաւանդ սիրոյ բնագաւառում: Բայց մի գիծ յատուկ է Շանթի բոլոր հերոսներին, ունի և Վահրամը. նա շատ է պարծենում իւր անձնուրացութեամբ: Իսկական անձնագոն մարդը մեզ թւում է այլ նկարագիր պէտք է ունենայ. նա չ'պէտք է ծախու ապրանք դարձնի իւր անձնուրացութիւնը և պատահողի առաջ իրեն նահատակ ձևացնի: Հէնց այնտեղ, ուր սկսում է պարծենկուստութիւնը, անձնուրացութեան գաղափարը նույնանում է և սկսում է մի ողորմելի առուտուր . . . «Ես կորսւած մարդ եմ, Մարի, — ասում է Վահրամը, — ես տւեր եմ գլուխս ալ ուժերս ալ օրերս ալ և բոլորը ինչ որ ունիմ: Ես իմս չեմ, Մարի, ես երթալու եմ շուտով, ես եկած եմ երթալու համար. երթալու, մեռներու, որովհետեւ գնացողին դարձ չի կայ, հոնկէ դարձ չի կայ» (եր. 71):

Վահրամը գիտակցաբար տանջում է աղջկան, որովհետեւ իւր կեանքի անապատի մէջ դա միակ օազիսն է, որից պէտք է յագուրտ ստանայ: Եւ նա շատ ուրախանում է, որ իւր գնալը յետաձգւում է: Ի հարկէ, այդ բոլորն անում է նա՝ միշտ սրտի մէջ ունենալով ներքին դժգութիւն իրենից, նա մարակում է ինքն իրեն, համարում է իւր անձն ու գործը գէշ, գժգոհում է թէ իւր պատահական սիրուց և թէ իւր կոչումից, որ խանգարիչ է հանդիսանում անձնական վայելքին: «տեսակ մը բողոք, ինքս ինձմէ դժգոհութիւն, ներքին խայթի պէս բաներ» — ահա նրա ներքին աշխարհի բովանդակութիւնը: Հանրական գործը կարծես մի բեռ է նրա համար, որ ոյժ չունի թօթափելու իրենից, չնայած որ նրան Շանթը դարձել է ուժեղ հերոս, պարտականութեան և տւած ուխտի մարտիկ:

Նա ներքուստ շատ ուրախ կլինէր, եթէ որ և է դիպւածով
ինքը կարողանար ազատւել իւր ծանր պարտքից: «Ինչ
կամեն մարդիկ, ընկերները» ահա թէ ինչից է նա վախե-
նում և ի վերջոյ ատիպւած է գնալ ամենաթոյլ ընդդիմա-
դրութեան գծով և զոհում է այն աղջկան, որին վատօրէն
գրաւել էր իւր սնամէջ ճառերով...»:

V.

Մատնիչ Մուշեղը և յեղափոխական Վահրամը Շանթի
համար գեղարւեստական սայթաքումներ են: Նա դուրս էր
եկել իւր գեղեցկի շաւղից և պատմեց: Իւր վերջին գըր-
ւածքով նա դարձեալ մտաւ իւր հունի մէջ: Եւ խկապէս,
«Հին Աստածները պատկանում է Շանթի գեղեցկին, նա
այդ գրւածքի մէջ ևս հանդիսանում է այն, ինչ որ է իրօք. —
սեոփ և դասալքութեան երդիչ: Նրա գեղեցկի այդ երկու
տարրերը հարազատօրէն և գեղարւեստօրէն ցուցադրւած
են այդ գրւածքի մէջ, հէնց այդ հանդամանքին էլ պիտի
վերագրել վերջինիս անսպասելի յաջողութիւնը:»

Թէ Սեղան և թէ իշխանուհին Շանթի հերոսուհիների
հարազատ պատճէնն են:

Անցած վերլուծութիւնից երևաց, որ Շանթի հերոսու-
հիները սիրոյ խնդրում միշտ նախաձեռնող են և նրանք
են, որ աղամարդու մէջ վառում են սիրոյ և յոյսի ջահեր: Աբեղայի նկատմամբ այդպէս է Սեղան: Վերջինս է, որ
Աբեղային դուրս է բերում անշարժութեան և անկամու-
թեան թմրութիւնից, երևում է նրան և խրախուսում մի
կնոջ բոլոր թովչանքներով և հրապոյրներով. «Այ, եկայ
քեզի ընկեր, — ասում է Սեղան, — և եկայ այսպէս կէս գի-
շերին, որ մինակ ըլլանք ես ու դուն: Դուն, իմ քաջս, իմ
քաջս, իմ արևս, իմ լուղորդս» (Եր. 24):

Շանթի հերոսուհին յանդուզն է և համարձակ: Սիրոյ
անունով ամեն բան ներելի է, ահա նրա նշանաբանը: Շանթի
հերոսների սէրը անցողական է, մինչդեռ Շանթի հերոսու-
հին տեսականապէս սիրել դիտէ: Սիրոյ այդ տեսականու-

թեան ներկայացուցիչն է իշխանուհին: Տարիներ շարու-
նակ նա սիրել է Վանահօրը և ոգևորւել է այդ սիրով. «Եւ
հոգիիս միակ լուսաւոր աստղը եղեր է ան, — ասում է իշ-
խանուհին, — որ հեռու հեռոն կայ ուրիշ հոգի մը, իմինիս
պէս մինակ, իմինիս պէս լքւած, իմինիս պէս կարօտ,
եղբայր հոգի մը, որ կը հասկընայ ինծի ու կրած ծանր
խաչս, որ մօտիկ է ինծի ու կ'սիրէ ինծի» (Եր. 94):

Շանթը իւր այդ հերոսուհիների կողքին դրել է երկու
դասալիք: Վանահայրը դասալիք է սիրոյ մէջ, իսկ Սբեղան —
հանրական գործի կամ կոչման մէջ:

Մշուշապատ դարձւածքների միջից աղօտ կերպով
երկում է Վանահօր կերպարանքը: Նա սիրելիս է եղել իշ-
խանուհուն և մեոցըրել է կամ աշխատել է մեոցնել այդ
սէրն իւր մէջ: Եւ այժմ նա կանգնած է իշխանուհու ա-
ռաջ, որին նա սիրել է, և կամենում է ցոյց տար, որ իւր
սէրը մարել է: «Ոչ, — ասում է իշխանուհին, — կ'ըսեմ քեզի.
Հմարեցան այդ կայծերը: Աշխատեցար որ մարես, աշխա-
տեցար որ խարես քեզի, օրօր ըսիր հոգիիդ ու համոզե-
ցիր քեզի, թէ մարեր ես, բայց չը մարեցիր. չէիր կընար»
(Եր. 64):

Սիրոյ խորակումից յետոյ Վանահայրը համոզւում է,
որ պէտք է սպանել մարմինը՝ հոգին հզօրացնելու համար:
Դա արդէն Շանթի դասալիքներին յատուկ ծայրայեղու-
թեան պաշտամունքն է, մի բնեուից միւսը թոչելը նրանց
յատկութիւնն է: Պէտք է տիրել մարմին, բնազդներին,
պէտք է կրքեր չունենալ և զեկավարւել միայն անմարմին
վերացականութեամբ, սուրբ հոգով: Նա խոստվանում է,
որ իւր հետ վանք է բերել աշխարհիկ շատ տարրեր. «Ներ-
քին վայելքի ծածուկ կարօտ մը, քօղարկւած հաճոյքնե-
րու բարակ ծարաւ մը, մեր անցած կեանքի, կուի ու
յուղումներու ամբողջ նուրբ և կաշուն ցանց մը, և ակա-
մայ վերյուշներ» (Եր. 113):

Եւ այդ բոլորի զէմ նա կուի է ելնում, երբ արդէն
ծեր է, երբ մարմինը նրա մէջ մի առանձին գեր չի կա-
տարում: Բայց դասալիքի հոգին նրա մէջ ուժեղ է, նա

դարձեալ մերժում է իշխանուհու դէպի ինքը պարզած ձեռքը և վատօրէն մեղադրողի դերում է հանդէս գալիս՝ արհամարհելով մի կնոջ քսան և հինգամեայ սիրոյ տանշանքներն ու տառապանքները . . .

Աբեղան, ինչպէս ասացինք, կոչման դասալիք է: Նա աչքը բաց է արել վանքում, ինչպէս ինքն է ասում. «Իմ աշխարհքս վանքն է եղեր միշտ, քանի խելքս կը հասնի» (եր. 25): Նա դաստիարակւել է վանահօր ձեռքի տակ և վերջինս է եղել Աբեղայի իդէալը: Վանահօր խրատներն ու օրինակը սրբութիւն են եղել Աբեղայի համար, Վանահօր ձայնը նրան թւացել է թէ երկնքից է գալիս: Վանահայրն էլ վերջ ի վերջոյ համոզւել է, որ Աբեղան իւր աշակերտն ու հպարտութիւնն է, իւր գործի շարունակողը պիտի դառնայ:

Սակայն մի գեղեցիկ օր Աբեղան համոզւում է, որ իւր ճգնութիւնը ոչ մի նպատակ չունի: «Ախ,— ասում է նա,— գոնէ գիտնայի, որ իզուր չէ այս ճգնութիւնը . . . Ի՞նչ կեանք է աս. մոռցւած մոմ մը խաչելութեան առջեր, դժգոյն ու մինակ, որ կը մխայ ու կ'հալի» (եր. 42):

Ի՞նչ է պատահել: «Իգային եսի» հրապոյրը կորցրել է Աբեղայի հաւասարակշռութիւնը և արդէն պատրաստ է դասալիքի համար փախուստի ճամբան: Բայց նախ քան փախչելը դասալիքը պէտք է դեռ ինքն իրեն արդարացնի: Եւ նա ինքնարդարացման տեսիլքներ է տեսնում. կեանքը կարճ է (ունայնութեան փոսը) և պէտք է ամենքը մեռնեն, ուրեմն և վայելելու է անցողիկ կեանքի հրապոյները: Նա երազում է և երազի մէջ միշտ մարմին է տեսնում: Իւր երազի աղջիկներից մէկը նրան հրապուրում է ասելով. «Արհամարհիր այս մարմինը. այս առողջ, այս ձկուն, այս ուժեղ մարմինը»:

Դասալքութիւնը հոգեբանօրէն արդէն պատրաստ է և մնում է արտայայտել այն, որպէս գործ: Հէնց այստեղ է, որ կամազուրկ, թուլամորթ և երազամոլ Աբեղան ընկնուժ է դժւար կացութեան մէջ: Իսկապէս նա թոյլ ու խեղճ մարդ է, ձիշտ այնպէս, ինչպէս Շանթի բոլոր դասալիքները: Խախուտ և ողորմելի է նրա հոգեկան կազմը և այդ

է պատճառը, որ նա միշտ լաց է լինում իւր անկամութեան և թուլամորթութեան արցունքներով: Կամքի ոյժ չէ տւած նրան և այդ է պատճառը, որ Քօղաւորը նրա ականջին երգում է, թէ կամքի գոյութիւնը պատրանք է միայն: Նա տատանւում է, անընդունակ է վճռական քայլ անելու: Եւ անա մեր դասալիքը աղջում է աղջկան, որ նա փրկի իրեն անյարմար կացութիւնից. «Ետ տուր ինծի իմ հպարտութիւնս, իմ մեծամիտ խորհրդածութիւններս. ետ տուր ինծի իմ հաւատքս, իմ Աստւածս, տուր, ետ տուր ինծի իմ Աստւածս . . .» (եր. 76):

Իրական կեանքի մէջ անպէտք լինելով՝ նա Շանթի միւս հերոսների նման սկսում է երազել և երազի մէջ իրեն տեսնում է օժտւած այն յատկութիւններով, որ չունի խելապէս: Երազի մէջ նա հզօր է և նրա հզօրութիւնը խոստովանողներն աղջիկներ են, որոնք պոռում են. «Ի՞նչ ոյժ, ի՞նչ ոյժ»: Երազի մէջ նա կուի մարդ է, որ չէ իրօք. Իրական կեանքի մէջ համարձակութիւն և յանդգնութիւն չունի, որովհետեւ աւելի անուրջներով է ապրում, քան իրականութեամբ: Երազի մէջ Աբեղան գտնուում է մարտիկների շրջանում, վերցնում է մի բաժակ գինի և հետեւել կենացն է առաջարկում. «. . . Ես կը խմեմ կուի կենացը, որ վերն է խաւարին ու ամպերուն մէջը. . . կուի, որ գուրսն է, աշխարհի վրայ, ուրկէ դուք կուտք. կուի, որ հոն է, ծովուն մէջ, փոթորկի տեեն, ուրկէ ես կու գամ» (եր. 86):

Երազի մէջ բացի հզօր մարդ լինելուց նա միաժամանակ և համարձակ է . . . համարձակ սիրոյ խոստովանութեան մէջ. «Իշխան, այս թասը ես կը խմեմ քու աղջկանդ կենացը» . . . Դասալիքի համար դա մի գլխապայտ թոփչք է, մի անկարելիութիւն: Բոլորի ներկայութեամբ, հաստրակութեան առաջ, տուանց քաշելու սէր խոստովանել, — այդպիսի քայլի մինչեւ օրս անընդունակ են եղել Շանթի հերոսները և լու է, որ այդ բանը Աբեղան անում է երազի մէջ . . .

Բայց այդչափ երազելը էժան չի նստում Աբեղային: Նա երազում է հաւատքում. վերջը երազելով ուշաթափ-

ւում է, հիւանդանում և ամենքի կարեկցութեան առարկան գառնում։ «Մեր խեղճ, մեր բարի, մեր մաքուր Արեգան», «Հեղ ու բարի, համեստ ու սուրբ Արեգան», վերջապէս, մնաք բարև է ասում իւր երէկւան պաշտամունքներին։ Ուր է նա գնում։—Դէպի կեմնք, թէ ինքնասպանութիւն է գործում։

Դա հետաքրքրական էլ չէ իմանալ։ Ցանկալի է, որ նա ինքնասպանութիւն գործած լինի, որովհետև կեանքը վըլսառում է դասալիքներով և նրան պէտք չէ մի նոր, աւելի սոսկալի, աւելի տպաւորիչ դասալիք—դասալիքի գեղարւեստական պատկերը . . .

Մենք թոռոցիկ կերպով և մի քանի համառօտ բնոյթագծումներով աւինք «Հին Աստւածների» վերլուծումը։ Վերջերս այնքան շատ խօսւեց և այնքան շատ գրւեց այս գրւածքի մասին, այնքան բազմակողմանի տեսակէտներով քննադատւեցին դրա հերոսները, որ այլ ևս երկարօրէն վերլուծումների կարիք չ'մնաց։ Մեր նպատակն էր միտին ցոյց տալ Շանթի «Հին Աստւածների» և նրա գեղարւեստական գեղեցիկի ներքին կապը։ Եւ ամենեին նպատակ չունենք մտնել այս վէճերի մէջ թէ արդիօք դրամա է «Հին Աստւածները» թէ ոչ, իին ևնոր աստւածները ի՞նչ աշխարհայեացների արտայայտութիւն են կրում իրանց վրայ ևայլն։

Եթէ մեր առաջարած ինդիները կարողացանք որոշ չափով պարզել—այդ էլ բաւական է։

Կարեւոր ուղղում

Եր. 38, տող 23 տպւած է «սիրոյ համար, որի անձնութաց մի քայլ անելու անընդունակ է»։—Պէտք է լինի. «սիրոյ համար, որի հանդէպ անձնութաց մի ևն»։

Եր. 45, տող 31 տպւած է. «Երբ մեր մէջ առաջանում է այն հաւատը»։—Պէտք է լինի. «Երբ մենք դիտում ենք Շանթի հերոսունուն, մեր մէջ ևն»։



~~Տար~~
մաթ-1
9.1.24

հմա մյա շատեա այդիս չ նարա 18 բա 18 զի
. մաթ չ գութ—: և բաւարձը այդմ լիոց չի շատը
ուն չի ըստուն լիդման միոց մյա շատեա
ամառ չի ուն զիօց ։ և նարա 18 բա 18 զի
Նախա զան պոց ։ մաթ չ գութ— լայնուան մա չ նար
ուն չի ուն մահանաց միմա ցու

Ուն մակցի մասու և մի քանի ունանեա մաս
ի առաջակերտ ասեց ։ Առաջակերտ միլիան ուն
Նախա զան պոց ։ բաւարձը և այդը լուս պուտ ուն
ունան միա ամեր ։ ունանա ունանա մահանաց մաս
մաս և մաս ունանա ։ ուն ուն ունանա ։ ուն ուն
ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն
ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն
ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն
ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն
ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն
ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն



68.010